ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՄԵՐՈՒԺԱՆ ԱՇՈՏԻ ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ը.00.02-«Տնտեսության, նրա ոլորտների տնտեսագիտություն և կառավարում» մասնագիտությամբ տնտեսագիտության դոկտորի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2026

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում

Գիտական խորհրդատու՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Ռոբերտ Ներսեսի Սարինյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թաթուլ Մելսիկի Մկրտչյան
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Թաթուլ Նորայրի Մանասերյան
Տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր
Սամսոն Աշոտի Դավոյան

Առաջատար կազմակերպություն՝ Ռուս – Հայկական համալսարան

Ատենախոսության հրապարակային պաշտպանությունը կայանալու է 2026 թվականի հոկտեմբերի 2-ին՝ ժամը 14:00-ին, Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում (0025, ք. Երևան, Նալբանդյան փ. 128) գործող ՀՀ ԲԿԳԿ-ի Տնտեսագիտության 014 մասնագիտական խորհրդի նիստում:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2026թ. օգոստոսի 26 -ին:

014 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր

Տ.Ս. Մարտիրոսյան

Ատենախոսության ընդհանուր բնութագիրը

Հետազոտության թեմայի արդիականությունը: Ժամանակակից համաշխարհային տնտեսության զարգացումը ուղեկցվում է խորքային կառուցվածքային փոփոխություններով, որոնք դրսևորվում են արտաքին առևտրի ինտենսիվացման, ֆինանսական շուկաների դինամիկ զարգացման և երկրների միջև տնտեսական փոխկախվածության աճի պայմաններում: Այս գործընթացները առանձնապես կարևոր նշանակություն ունեն փոքր և բաց տնտեսությունների համար, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը, որտեղ տնտեսական կայունության ապահովումը և զարգացման արդյունավետ մոդելի ձևավորումը դառնում են առաջնահերթ խնդիրներ:

Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսությունը բախվում է մի շարք համակարգային մարտահրավերների, որոնք պայմանավորված են ինչպես արտաքին, այնպես էլ ներքին գործոններով: Մասնավորապես, երկրի ցամաքով շրջապատված լինելը, սահմանափակ տրանսպորտային և լոգիստիկ հնարավորությունները, արտաքին առևտրի կառուցվածքային անհավասարակշռությունները և վճարային հաշվեկշռի դեֆիցիտը սահմանափակում են տնտեսական արդյունավետության բարձրացման հնարավորությունները:

Տնտեսության կառուցվածքային վերլուծությունը վկայում է, որ ծառայությունների ոլորտի գերակշռությունը և արդյունաբերության ու բարձր տեխնոլոգիական ոլորտների հարաբերական թուլությունը չեն ապահովում տնտեսության բարդության և արտադրողականության բավարար մակարդակ: Արդյունքում սահմանափակվում են ինչպես ներքին աճի ներուժը, այնպես էլ արտաքին շուկաներում մրցունակության բարձրացման հնարավորությունները:

Միևնույն ժամանակ, տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի տնտեսությունը շարունակում է մնալ զգայուն արտաքին շոկերի նկատմամբ, իսկ սոցիալ-տնտեսական մի շարք ցուցանիշներ՝ աղքատության մակարդակը, եկամուտների անհավասար բաշխումը և ներդրումային ակտիվության սահմանափակ մակարդակը, հանդիսանում են երկրի տնտեսական կայուն զարգացման հիմնական խոչընդոտները:

Հարավային Կովկասի երկրների համեմատական վերլուծությունը ևս փաստում է, որ տարածաշրջանում առկա են զարգացման անհամաչափություններ, իսկ տնտեսական համագործակցության մակարդակը մնում է ցածր, ինչը չի ապահովում տարածաշրջանային ինտեգրման և համատեղ տնտեսական զարգացման լիարժեք իրագործում:

Տնտեսության սոցիալական բաղադրիչի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ եկամուտների բաշխման համակարգում պահպանվում է անհավասարություն, իսկ միջին խավի ձևավորումը ընթանում է դանդաղ տեմպերով: Սա սահմանափակում է ներքին պահանջարկի աճը և սոցիալ-տնտեսական կայունության ամրապնդումը:

Արտաքին առևտրի զարգացման վերլուծությունը վկայում է, որ Հայաստանի արտաքին տնտեսական հարաբերությունները շարունակում են բնութագրվել բարձր կենտրոնացվածությամբ և սահմանափակ դիվերսիֆիկացիայով: Տարածաշրջանային առևտրի ցածր մակարդակը և արտաքին շուկաներից կախվածությունը մեծացնում են տնտեսության խոցելիությունը: Այս պայմաններում առանձնահատուկ կարևորություն է ստանում արտաքին առևտրի ուղղությունների ընդլայնումը և նոր շուկաների ներգրավումը:

Լոգիստիկ համակարգի արդյունավետության գնահատումը ցույց է տալիս, որ Հայաստանի և հետխորհրդային երկրների մեծ մասի լոգիստիկ հնարավորությունները զիջում են

միջազգային մակարդակին, ինչը լրացուցիչ սահմանափակում է արտաքին առևտրի զարգացման և տնտեսական ինտեգրման հնարավորությունները:

Այսպիսով, հետազոտության թեմայի արդիականությունը պայմանավորված է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման բազմաշերտ և փոխկապակցված հիմնախնդիրների առկայությամբ, որոնք ներառում են տնտեսության կառուցվածքային արդյունավետության բարձրացումը, տնտեսական անվտանգության ապահովումը, եկամուտների բաշխման բարելավումը, արտաքին առևտրի դիվերսիֆիկացումը և լոգիստիկ համակարգի զարգացումը: Նշված խնդիրների համալիր ուսումնասիրությունը և դրանց լուծման ուղիների մշակումը կարևոր նշանակություն ունեն երկրի կայուն և երկարաժամկետ զարգացման ապահովման համար:

Հիմնախնդրի ուսումնասիրության աստիճանը: Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները տարբեր ժամանակաշրջաններում գտնվել են ինչպես արտերկրյա, այնպես էլ հայրենական հետազոտողների ուշադրության կենտրոնում և ստացել են բազմաբնույթ գիտական մեկնաբանություններ: Մակրոտնտեսական զարգացման, տնտեսական աճի և արտաքին տնտեսական հավասարակշռության հիմնահարցերը լայնորեն ուսումնասիրվել են մի շարք տնտեսագետների կողմից, որոնց աշխատություններում կարևորվել են վճարային հաշվեկշռի, արտաքին առևտրի և տնտեսական արդյունավետության փոխկապակցվածության հարցերը:

Ցամաքով շրջապատված երկրների զարգացման առանձնահատկությունները և դրանց տնտեսական հետևանքները ուսումնասիրության առարկա են դարձել տարբեր միջազգային հետազոտողների կողմից, որոնք ընդգծել են աշխարհագրական սահմանափակումների ազդեցությունը տնտեսական աճի, տրանսպորտային ծախսերի և միջազգային ինտեգրման հնարավորությունների վրա:

Տնտեսության կառուցվածքի, բարդության և արտադրողականության հիմնահարցերը իրենց արտացոլումն են գտել ժամանակակից տնտեսագիտական տեսություններում, որտեղ կարևոր դերակատարում ունեն տնտեսական բարդության և կառուցվածքային վերափոխումների վերաբերյալ մոտեցումները, որոնք հիմնավորվել են մի շարք հետազոտողների աշխատություններում:

Մասնավորապես, տնտեսական բարդության տեսության զարգացման գործում նշանակալի ներդրում ունեն Ռիկարդո Հաուսմանը, Մեզար Իդալգոն, Բեյլի Քլինգերը և նրանց համահեղինակները, որոնք հիմնավորել են, որ երկրի տնտեսական զարգացման մակարդակը պայմանավորված է ոչ միայն արտահանման ծավալներով, այլև արտահանվող արտադրանքի բազմազանությամբ, տեխնոլոգիական բարդությամբ և տնտեսությունում կուտակված գիտելիքների ծավալով: Նրանց կողմից մշակված տնտեսական բարդության ինդեքսը ներկայումս համարվում է երկրների կառուցվածքային մրցունակության գնահատման առավել կիրառվող գործիքներից մեկը:

Տնտեսական անվտանգության գնահատման հիմնախնդիրը ևս լայնորեն ուսումնասիրվել է տարբեր գիտական դպրոցների ներկայացուցիչների կողմից, որտեղ կիրառվել են ցուցանիշային, բալային և մատրիցային մեթոդներ: Այս ուղղությամբ կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տվել ձևավորելու տնտեսական անվտանգության գնահատման բազմակողմանի մեթոդաբանական մոտեցումներ: Մասնավորապես, տնտեսական անվտանգության ռազմավարական և ինստիտուցիոնալ հիմնահարցերին անդրադարձել է նաև Թ. Մկրտչյանը՝ «Տնտեսական անվտանգության արդի հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» մենագրությունում (Եր., Հեղ. հրատ., 2016, 278 էջ), որտեղ տնտեսական

անվտանգությունը դիտարկվում է որպես ազգային անվտանգության կարևոր բաղադրիչ՝ ընդգծելով տնտեսության կայունության, մրցունակության, ռիսկերի կառավարման և պետական կարգավորման արդյունավետության նշանակությունը:

Եկամուտների բաշխման, սոցիալական անհավասարության և միջին խավի ձևավորման հիմնահարցերը ուսումնասիրվել են ինչպես դասական, այնպես էլ ժամանակակից տնտեսագետների կողմից, որոնք իրենց աշխատություններում հիմնավորել են եկամուտների բաշխման և տնտեսական աճի փոխկապակցվածության կարևորությունը:

Սոցիալական անհավասարության, տնտեսական աճի և ինստիտուցիոնալ զարգացման փոխկապակցվածության հարցերը լայնորեն ուսումնասիրվել են նաև Ջոզեֆ Ստիգլիցի, Դարոն Աջեմօղլուի, Ջեյմս Ռոբինսոնի, Դանի Ռոդրիկի և այլ հեղինակների աշխատություններում, որոնցում ընդգծվում է արդյունավետ ինստիտուտների, մարդկային կապիտալի և ներառական տնտեսական քաղաքականության նշանակությունը կայուն զարգացման ապահովման գործում:

Արտաքին առևտրի զարգացման, դրա կառուցվածքի և միջազգային ինտեգրման հիմնահարցերը դիտարկվել են միջազգային առևտրի տեսության շրջանակներում, ովքեր բացատրել են համեմատական առավելությունների և նոր առևտրի տեսության հիմնարար սկզբունքները:

Միջազգային առևտրի տեսության զարգացման մեջ առանձնահատուկ նշանակություն ունեն Ադամ Սմիթի, Դևիդ Ռիկարդոյի, Էլի Հեքշերի, Բերտիլ Օհլինի, Փոլ Կրուգմանի և Մայքլ Փորթերի աշխատությունները, որոնցում ձևակերպվել են համեմատական առավելությունների, գործոնային ապահովվածության, մասշտաբի էֆեկտների և ազգային մրցակցային առավելությունների հիմնարար սկզբունքները, որոնք մինչ օրս կիրառվում են երկրների արտաքին տնտեսական քաղաքականության գնահատման ընթացքում:

Լոգիստիկ համակարգերի և դրանց տնտեսական ազդեցության ուսումնասիրությունները ևս լայնորեն ներկայացված են ժամանակակից տնտեսագիտական գրականության մեջ, որտեղ կարևորվել է ենթակառուցվածքների և ինստիտուցիոնալ միջավայրի դերը արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման գործում:

Հայ հետազոտողներից սոցիալ-տնտեսական զարգացման տարաբնույթ ուղղությունների հիմնախնդիրներին իրենց աշխատություններում անդրադարձել են մի շարք գիտնականներ, որոնց ուսումնասիրությունները նպաստել են Հայաստանի տնտեսության կառուցվածքային, սոցիալական և արտաքին տնտեսական առանձնահատկությունների բացահայտմանը:

Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման, տնտեսական անվտանգության, արտաքին տնտեսական հարաբերությունների, մակրոտնտեսական կայունության և տնտեսական վերափոխումների հիմնահարցերին իրենց աշխատություններում անդրադարձել են նաև Ռ. Սարինյանը, Ա. Մարկոսյանը, Վ. Խաչատուրյանը, Է. Մաթևոսյանը, Ա. Գրիգորյանը և այլ հայ տնտեսագետներ, որոնց ուսումնասիրությունները կարևոր ներդրում ունեն ազգային տնտեսության զարգացման առանձնահատկությունների, արտաքին տնտեսական ինտեգրման և տնտեսական քաղաքականության կատարելագործման ուղղությամբ:

Նշված և այլ հեղինակների աշխատությունների վերաբերյալ հղումները կատարվել են ինչպես սույն աշխատությունում, այնպես էլ հեղինակի կողմից հրապարակած հոդվածներում:

Այնուամենայնիվ, չնայած առկա բազմաբնույթ ուսումնասիրություններին, Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնահարցերը և դրանց առաջնահերթությունների կարևորությունը դեռևս չեն ստացել համալիր և ինտեգրված գնահատում, որտեղ միաժամանակ դիտարկվեն տնտեսության կառուցվածքը, տնտեսական

անվտանգությունը, եկամուտների բաշխումը, արտաքին առևտուրը և լոգիստիկ համակարգը՝ որպես փոխկապակցված համակարգ:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում մշակելու նոր տեսամեթոդաբանական մոտեցումներ և գործնական լուծումներ, որոնք հնարավորություն կտան համակցված ձևով գնահատելու նշված ուղղությունները և ձևավորելու երկրի սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունների համակարգը, ինչը և պայմանավորել է սույն հետազոտության թեմայի ընտրությունը, դրա արդիականությունն ու հրատապությունը:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրության հիման վրա գնահատել տնտեսության կառուցվածքային արդյունավետությունը, տնտեսական անվտանգության մակարդակը, եկամուտների բաշխման առանձնահատկությունները և արտաքին առևտրի զարգացման միտումները, ինչպես նաև առաջարկել զարգացման առաջնահերթ ուղղություններ և կատարելագործման գործնական ուղիներ: Դրված նպատակի իրականացման համար ատենախոսությունում տարանջատվել և լուծումներ են ստացել հետևյալ խնդիրները՝

Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդի հիմնախնդիրները և տալ դրանց համակարգային բնութագիրը,

- Վերլուծել երկրի վճարային հաշվեկշիռը և դրա հիման վրա գնահատել տնտեսության արդյունավետությունը,
- Ուսումնասիրել ցամաքով շրջապատված երկրների զարգացման տեսամեթոդաբանական առանձնահատկությունները և դրանց կիրառելիությունը ՀՀ պայմաններում,
- Գնահատել Հայաստանի տնտեսության կառուցվածքը, բարդության մակարդակը և արտադրողականության ցուցանիշները,
- Մշակել տնտեսական անվտանգության գնահատման տեսամեթոդաբանական մոտեցումներ և իրականացնել Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության համակողմանի գնահատում,
- Կատարել Հարավային Կովկասի երկրների տնտեսական անվտանգության համեմատական վերլուծություն և բացահայտել զարգացման ընդհանուր և տարբերակիչ միտումները,
- Վերլուծել տնտեսական անվտանգության, կենսամակարդակի, արտադրողականության և մարդու ազատության միջև փոխկապակցվածությունները,
- Ուսումնասիրել Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան և գնահատել տնտեսության վերարտադրության ներուժը,
- Վերլուծել համախառն ներքին արդյունքի կառուցվածքը և բացահայտել տնտեսության կառուցվածքային տեղաշարժերը,
- Գնահատել եկամուտների ձևավորման և բաշխման կառուցվածքը, ինչպես նաև հավելյալ արդյունքի նորմայի դինամիկան,
- Ուսումնասիրել բնակչության եկամուտների բաշխման հիմնախնդիրները և միջին խավի ձևավորման առանձնահատկությունները,
- Գնահատել տնտեսության կառուցվածքի և դրա արդյունավետության փոխկապակցվածությունը (ՀՀ օրինակով),

- Վերլուծել հետխորհրդային երկրների լոգիստիկ համակարգերի արդյունավետությունը և դրանց ազդեցությունը տնտեսական զարգացման վրա,
- Գնահատել տարածաշրջանային և միջազգային առևտրային ինտեգրման հնարավորությունները,
- Առաջարկել Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի զարգացման ռազմավարական ուղղություններ և դիվերսիֆիկացման ուղիներ:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտ են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական համակարգը և դրա զարգացման վրա ազդեցություն ունեցող հիմնական գործընթացներն ու գործոնները:

Հետազոտության առարկան Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման արդյունավետության բարձրացման, տնտեսության կառուցվածքային կատարելագործման, տնտեսական անվտանգության ապահովման, եկամուտների բաշխման բարելավման, ինչպես նաև արտաքին առևտրի և լոգիստիկ համակարգի զարգացման հետ կապված հիմնահարցերն են:

Հետազոտության տեսամեթոդական հիմքերը և տեղեկատվության ապահովումը: Ատենախոսության տեսական և մեթոդաբանական հիմք են հանդիսացել տնտեսագիտության դասական և ժամանակակից տեսությունների հիմնադրույթները, որոնք վերաբերում են մակրոտնտեսական զարգացմանը, տնտեսական արդյունավետությանը, կառուցվածքային վերափոխումներին, տնտեսական անվտանգությանը, եկամուտների բաշխմանը և արտաքին առևտրին:

Հետազոտության հիմքում դրվել են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացմանը վերաբերող օրենսդրական և նորմատիվային ակտերը, պետական ռազմավարական ծրագրերը, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների և արտերկրյա ու հայրենական հետազոտողների գիտական աշխատությունները:

Տեղեկատվական ապահովումը ներառում է Հայաստանի Հանրապետության Վիճակագրական կոմիտեի (ԱՐՄՍՏԱՏ) պաշտոնական վիճակագրական տվյալները, Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի հաշվետվությունները, միջազգային կազմակերպությունների (Համաշխարհային բանկ, ԱՄՀ և այլք) տվյալների շտեմարանները, ինչպես նաև արտաքին առևտրի, տնտեսական անվտանգության, լոգիստիկայի և սոցիալական զարգացման վերաբերյալ հրապարակված նյութերը:

Հետազոտության ընթացքում կիրառվել են տնտեսագիտական վերլուծության համընդհանուր և հատուկ մեթոդներ՝ համեմատական, կառուցվածքային, վիճակագրական, ինդեքսային, կոռելացիոն, ինչպես նաև էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդներ: Միաժամանակ օգտագործվել են համակարգային և ինտեգրված մոտեցումներ, որոնք հնարավորություն են տվել գնահատելու ուսումնասիրվող գործընթացների փոխկապակցվածությունը:

Հետազոտության հիմնական գիտական արդյունքները և նորույթը:

Հետազոտության ընթացքում ստացվել են մի շարք գիտական արդյունքներ, որոնցից նորույթ են.

- Մշակվել է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համալիր գնահատման ինտեգրված տեսամեթոդաբանական հայեցակարգ, որի շրջանակներում միասնական գնահատման համակարգում համադրվել են մակրոտնտեսական, կառուցվածքային, տնտեսական անվտանգության, սոցիալական բաշխման և արտաքին տնտեսական ցուցանիշները: Հայեցակարգի հիման վրա ձևավորվել է տնտեսական անվտանգության համալիր գնահատման

մոդել, որը հիմնված է բալային և մատրիցային գնահատման մեթոդների համադրման վրա և ապահովում է ազգային ու տարածաշրջանային մակարդակներում սոցիալ-տնտեսական զարգացման համադրելի և բազմագործոն գնահատում:

• Ձևավորվել է տնտեսության արտաքին արդյունավետության գնահատման վերլուծական մեթոդաբանություն, որը հիմնված է վճարային հաշվեկշռի ցուցանիշների համակարգային կիրառման վրա և հնարավորություն է տալիս գնահատելու արտաքին տնտեսական հարաբերությունների ազդեցությունը տնտեսական աճի, արտաքին կայունության և արտաքին խոցելիության ձևավորման վրա, ինչպես նաև բացահայտելու տնտեսության արտաքին հատվածի հիմնական ռիսկերը:

• Ձևակերպվել են ցամաքով շրջապատված երկրների սոցիալ-տնտեսական զարգացման տեսամեթոդաբանական հիմնադրույթները, որոնց հիման վրա հիմնավորվել է, որ աշխարհագրական սահմանափակումների բացասական ազդեցությունը կարող է էապես մեղմվել ինստիտուցիոնալ զարգացման, արդյունավետ տնտեսական քաղաքականության, լոգիստիկ կապերի ընդլայնման և արտաքին տնտեսական ինտեգրման միջոցով, ինչպես նաև սահմանվել են դրանց կիրառման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետության պայմաններում:

• Մշակվել և կիրառվել է Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային և տնտեսական բարդության համալիր գնահատման տեսամեթոդաբանական մոտեցում, որի հիման վրա բացահայտվել են տնտեսության կառուցվածքային անհամաչափությունները, գնահատվել է տնտեսական բարդության մակարդակը և հիմնավորվել են բարձր տեխնոլոգիական, գիտատար և բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղերի (ոլորտների) ու գործունեության տեսակների զարգացման առաջնահերթությունները՝ որպես ազգային տնտեսության երկարաժամկետ մրցունակության բարձրացման հիմք:

• Կատարվել է Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական զարգացման և վերարտադրության ներուժի համալիր գնահատում, որի ընթացքում վերլուծվել են համախառն ներքին արդյունքի, համախառն ավելացված արժեքի և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կառուցվածքային փոփոխությունները, բացահայտվել են տնտեսության ոլորտային անհամաչափությունները և հիմնավորվել են տնտեսական աճի որակի բարձրացման ու կառուցվածքային վերափոխման հիմնական ուղղությունները:

• Մշակվել է եկամուտների ձևավորման և բաշխման կառուցվածքային գնահատման մոտեցում, որի հիման վրա բացահայտվել են սոցիալ-տնտեսական անհավասարության հիմնական պատճառներն ու դրսևորումները և հիմնավորվել է միջին խավի ընդլայնման ռազմավարական նշանակությունը՝ որպես տնտեսական կայունության, ներքին պահանջարկի և ներառական տնտեսական աճի ապահովման առանցքային գործոն:

• Հետխորհրդային տարածաշրջանի երկրների լոգիստիկ համակարգերի և Հարավային Կովկասի ու տարածաշրջանի երկրների արտաքին առևտրի ինտեգրման հնարավորությունների համալիր գնահատման հիման վրա բացահայտվել են արտաքին առևտրի արդյունավետության վրա ազդող լոգիստիկ և կառուցվածքային հիմնական սահմանափակումները, գնահատվել են երկրների համեմատական առավելությունները, արտաքին առևտրի մասնագիտացման առանձնահատկություններն ու տարածաշրջանային ինտեգրման ներուժը, որոնց հիման վրա հիմնավորվել են Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման հիմնական առաջնահերթությունները՝ ուղղված արտահանման կառուցվածքային դիվերսիֆիկացմանը, բարձր ավելացված արժեք ունեցող արտադրության զարգացմանը, լոգիստիկ ենթակառուցվածքների կատարելագործմանը, տարանցիկ ներուժի արդյունավետ օգտագործմանը և տարածաշրջանային տնտեսական համագործակցության խորացմանը:

Հետազոտության տեսական և կիրառական նշանակությունը: Հետազոտության հիմնական արդյունքները կարող են իրենց տեսական և գործնական կիրառությունը գտնել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացների գնահատման և կատարելագործման առաջնահերթ ուղղությունների սահմանման գործում: Աշխատության շրջանակներում առաջարկված տեսամեթոդաբանական մոտեցումները հնարավորություն են տալիս համակողմանի գնահատելու տնտեսության կառուցվածքային արդյունավետությունը, տնտեսական անվտանգության մակարդակը, եկամուտների բաշխման առանձնահատկությունները և արտաքին առևտրի զարգացման միտումները՝ ապահովելով դրանց փոխկապակցված վերլուծություն:

Ստացված արդյունքները և առաջարկված լուծումները կարող են կիրառվել պետական տնտեսական քաղաքականության մշակման և իրականացման գործընթացում՝ ուղղված տնտեսության կառուցվածքային վերափոխմանը, տնտեսական անվտանգության ամրապնդմանը, արտաքին առևտրի դիվերսիֆիկացմանը և սոցիալական անհավասարության նվազեցմանը: Միևնույն ժամանակ, դրանք կարող են հիմք հանդիսանալ տնտեսական զարգացման ռազմավարությունների և ծրագրերի մշակման համար:

Հետազոտության մեջ ներկայացված մոտեցումները կարող են կիրառվել նաև տնտեսական վերլուծության և կանխատեսման գործընթացներում՝ նպաստելով մակրոտնտեսական ցուցանիշների գնահատման ճշգրտության բարձրացմանը, ինչպես նաև տնտեսական զարգացման միտումների ավելի արդյունավետ բացահայտմանը:

Առանձնահատուկ կիրառական նշանակություն ունեն արտաքին առևտրի զարգացման և լոգիստիկ համակարգի կատարելագործման ուղղությամբ առաջարկված լուծումները, որոնք կարող են նպաստել Հայաստանի Հանրապետության միջազգային տնտեսական ինտեգրման խորացմանը և արտաքին շուկաներում մրցունակության բարձրացմանը:

Հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել ինչպես պետական կառավարման մարմինների, այնպես էլ գիտահետազոտական և կրթական հաստատությունների կողմից՝ սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների ուսումնասիրման և համապատասխան քաղաքականության ձևավորման գործընթացներում:

Հետազոտության արդյունքների փորձարկումը և հրապարակումները: Հետազոտության հիմնական դրույթները քննարկվել են ՀՀ ԳԱԱ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտում, ինչպես նաև ներկայացվել են միջազգային և հանրապետական գիտաժողովներում՝ արժանանալով մասնագիտական դրական գնահատականների: Մասնավորապես, հետազոտության առանձին արդյունքներ ներկայացվել են ՀՀ պետական կառավարման ակադեմիայի 30-ամյակին նվիրված «30 Current Issues of Public Administration» 3-րդ միջազգային գիտաժողովում (2024թ.), «Սոցիալ–տնտեսական զարգացման հիմնախնդիրներն արհեստական բանականության նվաճումների ներդրման պայմաններում» միջազգային գիտաժողովում (2024թ.), «Armenia and the Global Gateway: Opportunities within Global South Connectivity» խորագրով Եվրոպա–Կովկաս–Ասիա կապակցվածությանը նվիրված 2-րդ միջազգային գիտաժողովում (2nd Conference on Europe-Caucasus-Asia Connectivity, 2025թ.), ԵՊՀ 90-ամյակին նվիրված «Transformative Economies: Spatial and Societal Perspectives» Springer Nature միջազգային գիտաժողովում, ինչպես նաև ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի «The Transformative Economy: Human Capital Development, Co-creative Innovative Economy and Sustainable Inclusive Growth» 2-րդ միջազգային գիտաժողովում (2025թ.): Աշխատության արդյունքները փորձարկվել են համապատասխան վերլուծական, տնտեսագիտական և վիճակագրական տվյալների կիրառմամբ, ինչը հնարավորություն է տվել

ապահովելու հետազոտության եզրահանգումների գիտական հիմնավորվածությունն ու գործնական կիրառելիությունը:

Հետազոտության շրջանակներում կատարված վերլուծությունները և առաջարկված մոտեցումները ներկայացվել են նաև ոլորտի մասնագետներին և գիտական հանրությանը, ինչը հնարավորություն է տվել գնահատելու դրանց արդյունավետությունն ու կիրառական նշանակությունը սոցիալ-տնտեսական զարգացման գործընթացներում:

Ատենախոսության հիմնական արդյունքները ներկայացված են հեղինակի 26 հրապարակումներում, այդ թվում՝ 1 մենագրությունում, 24 գիտական հոդվածում և 1 միջազգային գիտական գրքի գլխում: Հրապարակումներից 6-ն ընդգրկված են Scopus միջազգային գիտաչափական շտեմարանում:

Հետազոտության կառուցվածքը և ծավալը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, հինգ գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածներից: Աշխատանքի ծավալը կազմում է 337 էջ՝ առանց հավելվածների:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածությունում հիմնավորվել են թեմայի արդիականությունը ու հրատապությունը, ներկայացվել են հետազոտության օբյեկտն ու առարկան, ուսումնասիրության տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմքերը, ձևակերպվել են աշխատանքի նպատակն ու խնդիրները, ստացված հիմնական տեսական ու գործնական արդյունքները, ինչպես նաև գիտական նորույթն ու դրա գիտագործնական նշանակությունը, կիրառման հնարավոր ուղղությունները և կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ «Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման տեսամեթոդական հիմքերը և արդի հիմնախնդիրները» գլխում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները՝ դրանց խորքային տեսամեթոդաբանական և կիրառական վերլուծության հիման վրա:

Հետազոտվել է պետության վճարային հաշվեկշիռը՝ որպես մակրոտնտեսական համակարգի առանցքային ցուցանիշ, որի միջոցով հնարավոր է ամբողջական պատկերացում կազմել ազգային տնտեսության վիճակի, արտաքին տնտեսական կապերի և ռեսուրսների օգտագործման արդյունավետության վերաբերյալ: Հիմնավորվել է, որ վճարային հաշվեկշիռը ոչ միայն արտացոլում է ապրանքների, ծառայությունների, կապիտալի և ֆինանսական հոսքերի շարժը, այլև հանդես է գալիս որպես մակրոտնտեսական քաղաքականության ձևավորման կարևորագույն գործիք:

Վերլուծության արդյունքում բացահայտվել է, որ Հայաստանի Հանրապետության վճարային հաշվեկշիռը դիտարկվող ժամանակահատվածում բնութագրվում է կայուն բացասական հաշվեմնացորդով, ինչը պայմանավորված է ներմուծման գերակշռությամբ և արտաքին կախվածության բարձր մակարդակով: Համեմատական վերլուծությունը նախկին ԽՍՀՄ և ԵԱՏՄ երկրների միջև ցույց է տալիս, որ դրական հաշվեմնացորդ ունեցող երկրները հիմնականում ունեն արտահանման բարձր ներուժ, մինչդեռ Հայաստանը և Վրաստանը ունեն համակարգային դեֆիցիտ, ինչը վկայում է տնտեսության կառուցվածքային սահմանափակումների մասին:

Միաժամանակ հիմնավորվել է, որ վճարային հաշվեկշիռը կարող է կիրառվել որպես տնտեսության արդյունավետության համապարփակ գնահատման գործիք, որտեղ դրա

հաշվեմնացորդը ներկայացվում է որպես երկրի ռեսուրսների օգտագործման արդյունքների համախառն արտահայտություն՝ ներառելով ընթացիկ, կապիտալի և ֆինանսական հաշիվները: Այս մոտեցումը թույլ է տալիս գնահատել տնտեսության արդյունավետությունը ՀՆԱ-ի հետ համադրության միջոցով:

Աղյուսակ 1

Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի, Ռուսաստանի, Թուրքիայի վճարային հաշվեկշիռների մնացորդները, ընթացիկ մլն ԱՄՆ դոլարով, 2020-2024թթ.

Երկիրը	2020	2021	2022	2023	2024	2020-2024 հանրագումար
Հայաստան	-505.4	-471.4	144.0	-670.0	-1,194.5	-2,697.3
Ադրբեջան	-316.3	8,202.9	23,478.1	8,329.4	4,671.1	44,365.2
Վրաստան	-1,988.9	-1,939.3	-645.1	-1,701.8	-1,811.9	-8,087.0
Ռուսաստան	35,372.7	124,953.0	237,735.0	49,396.5	62,574.8	510,032.0
Թուրքիա	-30,980.0	-6,221.0	-46,283.0	-41,469.0	-10,411.0	-135,364.0
Ընդամենը	**1,582.1**	**124,524.2**	**214,429.0**	**13,885.1**	**53,828.5**	**408,248.9**

Նշում. Իրանի Իսլամական Հանրապետության տվյալները առկա չեն:

Ուսումնասիրվել են ցամաքով շրջապատված երկրների զարգացման մարտահրավերներն ու հնարավորությունները: Հիմնավորվել է, որ աշխարհագրական դիրքը հանդիսանում է սոցիալ-տնտեսական զարգացման կարևոր, սակայն ոչ որոշիչ գործոն: Ցամաքով շրջապատված երկրները բախվում են համակարգային խնդիրների՝ բարձր տրանսպորտային ծախսեր, արտաքին շուկաների սահմանափակ հասանելիություն և լոգիստիկ կախվածություն հարևան երկրներից:

Միևնույն ժամանակ, վերլուծությունը ցույց է տալիս, որ որոշ երկրներ կարողացել են հաղթահարել աշխարհագրական սահմանափակումները՝ զարգացնելով արդյունավետ ինստիտուտներ և նորարարական տնտեսություն, ինչը հաստատում է ինստիտուցիոնալ գործոնների առաջնային նշանակությունը տնտեսական զարգացման մեջ:

Հայաստանի Հանրապետության օրինակով ցույց է տրվել, որ երկրի աշխարհաքաղաքական դիրքը և սահմանափակ հաղորդակցությունները հանգեցնում են տրանսպորտային մեկուսացման և բարձր լոգիստիկ ծախսերի, ինչը սահմանափակում է արտաքին առևտրի դիվերսիֆիկացման հնարավորությունները: Միևնույն ժամանակ, տարածաշրջանային համագործակցության խորացումը և ենթակառուցվածքների զարգացումը կարող են մեղմել այդ սահմանափակումները:

Աղյուսակ 2

Ցամաքով շրջապատված երկրների վճարային հաշվեկշռի հիմնական բաղադրիչների համեմատական միջին տարեկան գնահատումը, 2020–2024 թթ. (ընթացիկ հազ. ԱՄՆ դոլարով, 8 երկիր)[1]

Երկիր	Ընթացիկ հաշիվ	Կապիտալի հաշիվ	Ֆինանսական հաշիվ	Սխալներ և բացթողումներ	Վճարային հաշվեկշռի մնացորդը
Հայաստան	-519489687	97706527	-357076468	214335492	-564524136
Ադրբեջան	8739646174	-5191000	9290768840	59744066	18084968080
Բելառուս	515292426	118283551	1174809881	311859098	2120244956
Ղազախստան	-4509311071	532972430	-5009060534	-1216395386	-10201794561
Ղրղզստան	-1847127806	138466965	-1578000000	1476000000	-1810660841
Սերբիա	-3021782300	-18256700	-2860975200	179063800	-5721950400
Տաջիկստան	984716600	343636900	1197038200	-131315200	2394076500
Ուզբեկստան	-5181248700	20973000	-5752492200	-592216400	-11504984400
Ընդամենը	**-4839304364**	**1228591673**	**-3894987481**	**301075470**	**-7204624802**

Նշում. Աղյուսակում ներկայացված թվերը վերաբերում են ցամաքով շրջապատված երկրների վճարային հաշվեկշռի հիմնական բաղադրիչների 2020–2024 թվականների միջին տարեկան արժեքներին՝ արտահայտված ընթացիկ ԱՄՆ դոլարով: Ներկայացված են միայն ՑՇ պետությունները: Տվյալները ներառում են վճարային հաշվեկշռի հիմնական բաղադրիչները՝ ընթացիկ հաշիվ, կապիտալի հաշիվ, ֆինանսական հաշիվ, սխալներ և բացթողումներ, ինչպես նաև ընդհանուր հաշվեկշռի մնացորդը, որը հաշվարկվել է նշված բաղադրիչների հանրագումարով: Միջին արժեքները հաշվարկվել են համապատասխան տարիների թվաբանական միջինով:

Գնահատվել է Հայաստանի Հանրապետության տնտեսության բարդությունը և արդյունավետությունը: Վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ տնտեսության կառուցվածքը բնութագրվում է ոլորտային անհամաչափություններով և բարձր ավելացված արժեք ստեղծող ոլորտների սահմանափակ զարգացմամբ, ինչը բացասաբար է անդրադառնում արտադրողականության և մրցունակության վրա:

[1] Կազմվել և հաշվարկվել է World Bank. (2026, May 1). *World Development Indicators*. The World Bank DataBank. https://databank.worldbank.org/home.aspx տվյալների հիման վրա:

Աղյուսակ 3

Տնտեսության բարդության ինդեքսով (ECI) հետխորհրդային երկրների դիրքային դինամիկայի համեմատական գնահատում, 1996–2024 թթ.[2]

Երկիր	1996–2002	2003–2009	2010–2014	2015–2019	2020–2024	Փոփոխություն
Հայաստան	35.9	55.7	62	73.2	53.6	17.7
Ադրբեջան	71.7	99.4	115.4	108.4	100.6	28.9
Բելառուս	29.9	28.3	29.2	33.8	33.8	3.9
Վրաստան	42.7	61.1	67.2	67.2	65.2	22.5
Էստոնիա	39	34.1	29.6	26.4	27	-12
Լատվիա	45.7	38.1	38.4	37.2	37.4	-8.3
Լիտվա	46.9	44.4	37	33.8	30	-16.9
Մոլդովա	70	72.9	70	73.2	70	0
Ռուսաստան	17.6	22	33	40	52.8	35.2
Ուկրաինա	26.7	31.7	37.6	45.4	51.6	24.9
Ղազախստան	60.9	80.3	86.2	85	70.2	9.3
Ղրղզստան	64.3	79.9	87	80	77.2	12.9
Ուզբեկստան	83	102.7	107.8	96.6	75.4	-7.6

Նշում. Աղյուսակում ներկայացված են տնտեսության բարդության ինդեքսով (Economic Complexity Index, ECI) երկրների դիրքերի միջին արժեքները համապատասխան ժամանակահատվածների համար: Ցուցանիշները հաշվարկված են HS92 դասակարգմամբ արտաքին առևտրի տվյալների հիման վրա և արտացոլում են երկրների արտահանման կառուցվածքի տեխնոլոգիական բարդությունն ու դիվերսիֆիկացման մակարդակը: «Փոփոխություն» սյունակում ներկայացված է 2020–2024 և 1996–2002 ժամանակահատվածների միջին դիրքերի տարբերությունը, որը բնութագրում է երկարաժամկետ դինամիկան: Ավելի բարձր դիրքը (ցածր թվային արժեքը) վկայում է տնտեսության ավելի բարձր բարդության մասին:

Ընդհանուր առմամբ, առաջին գլխում իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրները պայմանավորված են ինչպես արտաքին (աշխարհագրական, տարածաշրջանային), այնպես էլ ներքին (կառուցվածքային, ինստիտուցիոնալ) գործոններով, որոնց

[2] Տվյալները՝ The Growth Lab at Harvard University, 2026, "Growth Projections and Complexity Rankings", https://doi.org/10.7910/DVN/XTAQMC, Harvard Dataverse

հաղթահարումը պահանջում է համալիր և համակարգային մոտեցում։

Ատենախոսության երկրորդ՝ «Երկրի տնտեսական անվտանգության գնահատումը և զարգացման առաջնահերթությունների որոշումը» գլխում ներկայացվել են տնտեսական անվտանգության տեսամեթոդաբանական հիմքերը, դրա գնահատման մեթոդները, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության մակարդակի համալիր վերլուծությունը և զարգացման առաջնահերթությունների սահմանումը։

Ուսումնասիրվել է տնտեսական անվտանգության էությունը՝ որպես ազգային անվտանգության հիմնարար բաղադրիչ, որը պայմանավորում է պետության կայունությունը, տնտեսական համակարգի ճկունությունը և արտաքին ու ներքին սպառնալիքներին դիմակայելու կարողությունը։ Հիմնավորվել է, որ տնտեսական անվտանգության ապահովման կարևորագույն գործիքներից են ցուցանիշների համակարգի ձևավորումը և դրանց սահմանային (շեմային) արժեքների որոշումը, որոնք հնարավորություն են տալիս քանակական ձևով գնահատել տնտեսության խոցելիությունը և սպառնալիքների աստիճանը։

Վերլուծության ընթացքում ներկայացվել են տնտեսական անվտանգության գնահատման ժամանակակից մոտեցումները՝ ինդիկատիվ, ռեսուրսային, գործառական, սցենարային և ինտեգրված մեթոդները, որոնց համադրումը հնարավորություն է տալիս ապահովել գնահատման բազմակողմանիություն և բարձր ճշգրտություն։

Մշակվել և կիրառվել է տնտեսական անվտանգության գնահատման բալային մեթոդ, որի հիմքում ընկած է ցուցանիշների շեղվածության աստիճանի գնահատումը սահմանային արժեքներից։ Այս մեթոդը հնարավորություն է տալիս ստանալ ինտեգրալ ցուցանիշ, որը բնութագրում է տնտեսական անվտանգության ընդհանուր մակարդակը՝ տատանվելով 0-ից 1 միջակայքում, և ըստ որի տնտեսությունները դասակարգվում են անվտանգ, բավարար անվտանգ և վտանգավոր խմբերի։

Միաժամանակ առաջարկվել է տնտեսական անվտանգության գնահատման մատրիցային մեթոդ, որը հիմնված է չորս հիմնական չափանիշների վրա՝ վտանգի առաջացման հավանականություն, ազդեցության աստիճան, տևողություն և փոփոխման արագություն։ Մատրիցային մոտեցումը հնարավորություն է տալիս ոչ միայն գնահատել առկա վիճակը, այլև կանխատեսել հնարավոր ռիսկերն ու դրանց ազդեցության խորությունը։

Իրականացվել է Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատումը՝ կիրառելով բալային և մատրիցային մեթոդների համակցությունը։ Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ 1995–2024 թթ. ընթացքում տնտեսական անվտանգության մակարդակը ընդհանուր առմամբ ունեցել է աճի միտում, սակայն պահպանվել են մի շարք համակարգային խնդիրներ և սպառնալիքներ։

Բալային մեթոդի միջոցով Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները, երկարաժամկետ կտրվածքով (1995-2000,

2001-2006, 2007-2011, 2012-2016, 2017-2022, 2023-2024) ինչպես նաև ըստ առանձին տարիների (1995, 2000, 2021, 2022, 2024) բերված են գծապատկեր 1-ում և 2-ում:



Գծապատկեր 1. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների գումարային մեծությունը



Գծապատկեր 2. Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգության ցուցանիշների գումարային մեծությունները առանձին տարիներին

Մատրից

ՀՀ տնտեսական անվտանգության ցուցանիշների մատրիցը 2023-2024 թթ.

Մեծ, > 0,66	**6** **ՏԱՑ 3, ՏԱՑ 5, ՏԱՑ 14,**	**8** **ՏԱՑ 4, ՏԱՑ 11, ՏԱՑ 13, ՏԱՑ 15**	**9** **ՏԱՑ 1, ՏԱՑ 2, ՏԱՑ 8, ՏԱՑ 9, ՏԱՑ 10, ՏԱՑ 12, ՏԱՑ 16**
Միջին, 0,33 < X < 0,66	**3**	**5**	**7** **ՏԱՑ 6, ՏԱՑ 17, ՏԱՑ 18, ՏԱՑ 19, ՏԱՑ 20**
Փոքր, < 0,33	**1**	**2**	**4** **ՏԱՑ 7**
	Փոքր	**Միջին**	**Մեծ**

Առաջացման հավանականությունը

Ազդեցության չափը

Մասնավորապես, տնտեսական անվտանգության տեսանկյունից առավել խոցելի են հետևյալ ցուցանիշները՝ աղքատության մակարդակը, եկամուտների անհավասարությունը (Ջինիի գործակից), գիտության և կրթության վրա կատարվող ծախսերը, ինչպես նաև ներմուծման բարձր տեսակարար կշիռը ներքին սպառման մեջ:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ 2001–2006 թթ. ընթացքում արձանագրվել է տնտեսական անվտանգության որոշակի բարելավում՝ պայմանավորված գնաճի նվազմամբ, ներդրումների աճով և բյուջետային կայունությամբ:

Բացի այդ, առանձնացվել են տնտեսական անվտանգության ներքին և արտաքին սպառնալիքները: Ներքին սպառնալիքները ներառում են տնտեսության կառուցվածքային անհամաչափությունները, արտադրության ցածր արդյունավետությունը, սոցիալական անհավասարության խորացումը, կոռուպցիան և ստվերային տնտեսության մեծ ծավալը, մինչդեռ արտաքին սպառնալիքները կապված են արտաքին պարտքի աճի, ներմուծումից կախվածության և միջազգային տնտեսական հարաբերություններում առկա սահմանափակումների հետ:

Միաժամանակ հիմնավորվել է, որ տնտեսական անվտանգության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել կառուցվածքային բարեփոխումներ, խթանել տնտեսության դիվերսիֆիկացումը, զարգացնել բարձր տեխնոլոգիական և բարձր ավելացված արժեք ստեղծող ոլորտները, ինչպես նաև ապահովել ներդրումային ակտիվության աճ և սոցիալական քաղաքականության արդյունավետություն:

Բալային գնահատականների միջոցով Հարավային Կովկասի երեք հանրապետությունների (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան) տնտեսական անվտանգության ամփոփ ցուցանիշները բերված են գծապատկեր 3-ում:



Գծապատկեր 3. Հարավային Կովկասի հանրապետությունների տնտեսական անվտանգության գնահատման արդյունքները, ըստ առանձին ժամանակահատվածների միջին ցուցանիշների

Երկրորդ գլխում իրականացված վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական անվտանգությունը գտնվում է բավարար մակարդակում, սակայն դրա կայուն բարձրացման համար անհրաժեշտ է համակարգային տնտեսական քաղաքականություն, որը միաժամանակ կլուծի կառուցվածքային, սոցիալական և արտաքին տնտեսական հիմնախնդիրները:

Ատենախոսության երրորդ՝ «Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքը և արդյունավետության բարձրացման ուղիները» գլխում ներկայացվել են Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքի, մակրոտնտեսական ցուցանիշների շարժի և վերարտադրության ներուժի գնահատման տեսամեթոդաբանական և կիրառական հիմքերը:

Ուսումնասիրվել են ՀՀ մակրոտնտեսական ցուցանիշների դինամիկան և տնտեսության վերարտադրության ներուժը՝ ելնելով համախառն ավելացված արժեքի, ՀՆԱ-ի կառուցվածքի և ռեսուրսների օգտագործման արդյունավետության ցուցանիշներից: Հիմնավորվել է, որ տնտեսության կառուցվածքի գնահատման առանցքային չափանիշ է հանդիսանում առանձին ոլորտներում ծախսված ռեսուրսներից ստացված ավելացված արժեքի հարաբերակցությունը, ինչը թույլ է տալիս գնահատել տնտեսության արդյունավետությունը և զարգացման ներուժը:

Վերլուծության արդյունքում ցույց է տրվել, որ ՀՀ տնտեսությունը բաղկացած է բազմաթիվ տնտեսական գործունեության տեսակներից (21), որոնք խմբավորվելով ձևավորում են տնտեսության խոշորացված ոլորտները, և հենց դրանց համախառն ավելացված արժեքն է որոշում տնտեսության կառուցվածքը և զարգացման ուղղությունները:

Տեսական վերլուծության շրջանակում ներկայացվել են տնտեսական զարգացման դասական, նեոկլասիկ և ինստիտուցիոնալ մոտեցումները, որոնցում ընդգծվում է աշխատանքի բաժանման, կապիտալի կուտակման, տեխնոլոգիական առաջընթացի և ինստիտուցիոնալ միջավայրի նշանակությունը տնտեսական աճի և վերարտադրության գործընթացում:

Միաժամանակ հիմնավորվել է, որ տնտեսության կառուցվածքային վերափոխումը՝ ռեսուրսների տեղափոխումը ցածր արտադրողականություն ունեցող ոլորտներից դեպի բարձր արտադրողականություն ունեցող ոլորտներ, հանդիսանում է տնտեսական աճի և արդյունավետության բարձրացման կարևորագույն նախապայման:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև տեխնոլոգիական առաջընթացի, մասնավորապես՝ արհեստական բանականության կիրառման ազդեցությանը տնտեսության արդյունավետության վրա: Նշվել է, որ ԱԲ-ի ներդրումը կարող է նպաստել արտադրողականության աճին, ռեսուրսների օպտիմալ օգտագործմանը և տնտեսության բարդության աստիճանի ավելացմանը, սակայն միաժամանակ առաջանում են նոր սոցիալ-տնտեսական մարտահրավերներ:

Իրականացվել է ՀՀ ՀՆԱ-ի կառուցվածքային վերլուծությունը ըստ տնտեսության հիմնական ոլորտների: Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում (2012–2024 թթ.) տեղի են ունեցել էական կառուցվածքային փոփոխություններ: Մասնավորապես՝ գյուղատնտեսության բաժինը ՀՆԱ-ում նվազել է, արդյունաբերության բաժինը որոշակի աճ է արձանագրել, շինարարության տեսակարար կշիռը նվազել է, իսկ առևտրի և ծառայությունների ոլորտը դարձել է գերակշռող:

Միաժամանակ հիմնավորվել է, որ տնտեսության ավելի քան 70%-ը ձևավորվում է ոչ արտահանելի ոլորտներում, ինչը սահմանափակում է արտաքին շուկաներում մրցունակության հնարավորությունները և վկայում է տնտեսության կառուցվածքի ոչ բավարար արդյունավետության մասին:



Գծապատկեր 4. ՀՀ համախառն ավելացված արժեքի արտադրության արդյունավետությունն ըստ տնտեսական գործունեության հատվածների 2019-2024 թթ., տոկոսներով՝ համախառն ավելացված արժեքի հարաբերությունը ռեսուրսների թողարկմանը[3]

Գլխում կարևոր տեղ է զբաղեցնում նաև վերարտադրության ներուժի գնահատումը, որտեղ որպես ինտեգրալ ցուցանիշ կիրառվել է հավելյալ արդյունքի նորման, որը բնութագրում է տնտեսության արդյունավետությունը և աշխատանքի, կապիտալի և պետության միջև փոխհարաբերությունների որակը:

Ատենախոսության չորրորդ՝ «Հավելյալ արդյունքի նորմայի, բնակչության եկամուտների բաշխման և միջին խավի ձևավորման տնտեսական հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում» գլխում ուսումնասիրվել են հավելյալ արդյունքի նորմայի տեսամեթոդաբանական հիմքերը, աշխատանքի և կապիտալի միջև եկամուտների բաշխման հարաբերակցությունները, ինչպես նաև բնակչության եկամուտների անհավասարության, միջին խավի ձևավորման և պետական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանում:

Հասարակական-տնտեսական բոլոր համակարգերում ստեղծված արդյունքը բաժանվում է անհրաժեշտ և հավելյալ արդյունքների, իսկ դրանց հարաբերակցությունը պայմանավորված է արտադրության միջոցների սեփականության ձևերով, աշխատանքի և կապիտալի միջև ձևավորված ուժերի հարաբերակցությամբ, ինչպես նաև պետության սոցիալ-տնտեսական քաղաքականությամբ: Այս համատեքստում առանձնահատուկ ուշադրություն է դարձվել Կարլ Մարքսի հավելյալ արժեքի տեսությանը, որի համաձայն հավելյալ արժեքը ձևավորվում է վարձու աշխատողների աշխատանքի արդյունքի մի մասի յուրացման միջոցով: Միաժամանակ ներկայացվել են նաև ժամանակակից մոտեցումներ,

[3] Կազմվել և խմբավորվել է հեղինակի կողմից «Հայաստանի ազգային հաշիվները» 2023, Եր., ՀՀ ՎԿ, էջ 26-23-ի և ՀՀ վիճակագրական կոմիտե, (2025), Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվներ, https://www.armstat.am տվյալների հիման վրա:

որոնցում հավելյալ արդյունքի նորման դիտարկվում է ոչ միայն որպես շահագործման ցուցանիշ, այլև որպես տնտեսական աճի, ներդրումների և հասարակական զարգացման կարևոր չափանիշ:

Հայաստանի Հանրապետության ազգային հաշիվների համակարգի տվյալները և դրանց հիման վրա գնահատվել են աշխատանքի վարձատրության, արտադրության և ներմուծման հարկերի, ինչպես նաև տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների կառուցվածքային փոփոխությունները 2000–2023 թթ. ընթացքում: Վերլուծության արդյունքները ցույց են տվել, որ նշված ժամանակահատվածում ՀՆԱ-ի կառուցվածքում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության բաժինը նվազել է 42.7%-ից մինչև 33.3%, մինչդեռ տնտեսության համախառն շահույթի և համախառն խառը եկամուտների բաժինը աճել է 46.6%-ից մինչև 54.4%: Այսպիսով, եկամուտների բաշխման հարաբերակցությունը փոխվել է հօգուտ կապիտալի տերերի:

Ուսումնասիրության ընթացքում հաշվարկվել և գնահատվել են նաև վարձու աշխատողների աշխատանքի մասնակի և ամբողջական հավելյալ արդյունքի նորմաները: Արդյունքները ցույց են տվել, որ աշխատանքի մասնակի հավելյալ արդյունքի նորման 2000 թ. 26.6%-ից 2023 թ. հասել է 37.5%-ի, իսկ աշխատանքի ամբողջական հավելյալ արդյունքի նորման՝ 135.7%-ից մինչև 201.0%: Սա վկայում է այն մասին, որ տնտեսության մեջ ավելացել է աշխատանքի արդյունքում ստեղծված հավելյալ արդյունքի բաժինը, որը կենտրոնացվում է կապիտալի և սեփականության տերերի ձեռքում:

Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել նաև բնակչության եկամուտների բաշխման հիմնախնդիրներին և սոցիալական անհավասարության ձևավորման պատճառներին: Նշվել է, որ սոցիալական անհավասարությունը բազմագործոն երևույթ է, որը պայմանավորված է աշխատանքի շուկայի առանձնահատկություններով, կրթության և առողջապահության հասանելիությամբ, սպառման մակարդակի տարբերություններով, ժողովրդագրական գործընթացներով և տնտեսական կառուցվածքային փոփոխություններով: Կարևորվել է նաև սպառողական զամբյուղի դերը, որի արժեքի փոփոխությունը անմիջական ազդեցություն ունի աղքատության մակարդակի վրա:

Վերլուծության մեջ ներկայացվել են սոցիալական անհավասարության վերաբերյալ տարբեր տեսական մոտեցումներ: Միաժամանակ ցույց է տրվել, որ ժամանակակից տնտեսություններում անհավասարության բնույթը ենթարկվել է փոփոխությունների՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի աճով, արտադրության ավտոմատացմամբ, հեռավար աշխատանքի տարածմամբ և տեխնոլոգիական առաջընթացով:

Ուսումնասիրվել են նաև գլոբալ անհավասարության միտումները: Նշվել է, որ վերջին տասնամյակներում եկամուտների և հարստության աճը հիմնականում կենտրոնացել է հասարակության վերին շերտերում, իսկ այդ գործընթացների գնահատման համար կիրառվել են միջազգային տվյալների բազաներ, մասնավորապես՝ WID.world-ը, որը հնարավորություն է տալիս երկարաժամկետ ժամանակահատվածում վերլուծել եկամուտների և հարստության բաշխման փոփոխությունները:

Կարևոր տեղ է հատկացվել միջին խավի ձևավորման հիմնախնդիրներին: Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տվել, որ զարգացած շուկայական տնտեսություններ ունեցող երկրներում վերջին տասնամյակներին նկատվում է միջին խավի տեսակարար կշռի նվազման միտում, ինչը պայմանավորված է աշխատանքի և կապիտալի միջև եկամուտների բաշխման հարաբերակցության փոփոխությամբ: Նման գործընթացներ արձանագրվել են նաև Հայաստանի Հանրապետությունում, որտեղ աշխատանքի

եկամուտների հարաբերական նվազումը և կապիտալի եկամուտների աճը սահմանափակում են կայուն և լայն միջին խավի ձևավորման հնարավորությունները:

Աղյուսակ 4

ՀՀ բնակչության դրամական եկամուտների բաշխումը, ըստ 3 խմբերի, 1996-2024 թթ., %[4]

Բնակչության խմբերը	1996	1999	2001	2005	2006	2010	2015	2017	2018	2019	2020	2021	2022	2023	2024	1996-2024թթ. միջին
Աղքատ	4.4	4.9	8.5	12.5	10.5	11.5	10.5	10.5	11	12	11.5	12.9	13.6	13.7	14.2	10.9
Միջին	22.7	23.5	26.5	35	33	31	32.5	32.5	34	34	33	27.3	27.9	27.6	28	30
Հարուստ	72.9	71.6	65	52.5	56.5	57.5	57	57	55	54	55.5	59.8	58.5	58.5	57.9	59.1
Ընդամենը	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100	100

Ուսումնասիրության ընթացքում հիմնավորվել է պետության կարևոր դերը եկամուտների վերաբաշխման և սոցիալական անհավասարության մեղմացման գործընթացում: Ցույց է տրվել, որ շուկայական մեխանիզմը ինքնուրույն չի ապահովում սոցիալական արդարություն, ուստի անհրաժեշտ է պետական միջամտություն՝ հարկաբյուջետային քաղաքականության, սոցիալական ծրագրերի, տրանսֆերտների, նվազագույն աշխատավարձի, սուբսիդիաների և սոցիալական պաշտպանության այլ գործիքների միջոցով: Միաժամանակ ուսումնասիրվել են ԱՄՆ-ի և եվրոպական երկրների սոցիալական քաղաքականության մոդելները, որոնց փորձը ցույց է տալիս, որ սոցիալական պաշտպանության արդյունավետ համակարգերը կարևոր նշանակություն ունեն հասարակության սոցիալական կայունության և կենսամակարդակի բարձրացման համար:

[4] Կազմվել և հաշվարկվել են հեղինակի կողմից՝ Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2002, էջ 93-94, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2006, էջ 95, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2007, էջ 92, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2013, էջ 106,108, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ԱՎԾ, Երևան 2013, էջ 106,108, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ՎԿ (ԱՐՄՍՏԱՏ), Երևան 2017, էջ 103, 105, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ՀՀ ՎԿ (ԱՐՄՍՏԱՏ), Երևան 2022, էջ 143-145, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ԱՐՄՍՏԱՏ (ՀՀ ՎԿ), Երևան 2023, էջ 155, 158, , ՀՀ ՎԿ (ԱՐՄՍՏԱՏ), Երևան 2022, էջ 143-145, Հայաստանի վիճակագրական տարեգիրք, ԱՐՄՍՏԱՏ (ՀՀ ՎԿ), Երևան 2025, էջ 149 տվյալների հիման վրա:



Գծապատկեր 5. Բնակչության միջին խավի եկամուտների (ծախսերի) ավելացման մոդելը բնակչության միջին խավի եկամուտների (ծախսերի) քաղաքականության ձևավորման սկզբունքները

Ընդհանուր առմամբ, գլխում հիմնավորվել է, որ Հայաստանի Հանրապետությունում եկամուտների բաշխման, հավելյալ արդյունքի նորմայի և միջին խավի ձևավորման հիմնախնդիրները կրում են համակարգային բնույթ և պահանջում են համալիր պետական քաղաքականություն՝ ուղղված աշխատանքի և կապիտալի միջև առավել հավասարակշռված հարաբերակցության ձևավորմանը, սոցիալական արդարության ապահովմանը, բնակչության կենսամակարդակի բարձրացմանը և կայուն տնտեսական զարգացման խթանմանը:

Ատենախոսության հինգերորդ՝ «ՀՀ արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման հիմնական առաջնահերթությունները» գլխում ուսումնասիրվել են Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման հիմնախնդիրները՝ լոգիստիկ համակարգերի զարգացման, տարածաշրջանային տնտեսական ինտեգրման, արտաքին առևտրի մասնագիտացման և համեմատական առավելությունների գնահատման համատեքստում: Հատուկ ուշադրություն է դարձվել հետխորհրդային տարածաշրջանի երկրների լոգիստիկ արդյունավետության, Հարավային Կովկասի երկրների արտաքին առևտրային ներուժի և Հայաստանի արտաքին տնտեսական խոցելիության հիմնախնդիրներին:

Իրականացվել է հետխորհրդային 13 երկրների լոգիստիկ համակարգերի համեմատական վերլուծություն՝ Համաշխարհային բանկի Logistics Performance Index (LPI) 2023 թվականի տվյալների հիման վրա: Վերլուծության արդյունքում ցույց է տրվել, որ հետխորհրդային երկրների միջին LPI ցուցանիշը կազմել է 2.8, ինչը զիջում է համաշխարհային միջին մակարդակին՝ 3.0: Բացահայտվել է, որ Բալթյան երկրները (Էստոնիա, Լատվիա և Լիտվա) զգալիորեն մոտեցել են եվրոպական լոգիստիկ չափանիշներին՝ ունենալով միջինում 3.5 LPI միավոր, մինչդեռ Հարավային Կովկասի և Կենտրոնական Ասիայի երկրները շարունակում են բախվել ենթակառուցվածքային թերզարգացվածության, մաքսային անարդյունավետության և միջմոդալ փոխկապվածության սահմանափակումների հետ:

Ուսումնասիրությամբ հիմնավորվել է, որ Հայաստանի Հանրապետության լոգիստիկ

համակարգը դեռևս ունի կառուցվածքային սահմանափակումներ։ Հայաստանի ընդհանուր LPI ցուցանիշը 2023 թվականին կազմել է 2.5, իսկ առավել թույլ բաղադրիչներն են եղել միջազգային առաքումները և բեռների հետևման համակարգերը։ Միաժամանակ արձանագրվել է, որ Հայաստանի, Վրաստանի, Թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի համակցված միջին LPI միավորը կազմել է 2.7, ինչը փոքր-ինչ գերազանցում է ԱՊՀ երկրների միջին մակարդակը։ Այս երկրների լոգիստիկ համակարգերի առավել ուժեղ կողմը եղել է առաքումների ժամանակին կատարման ցուցանիշը (3.0), սակայն մաքսային ծառայությունների և ենթակառուցվածքների ոլորտներում պահպանվել են էական խնդիրներ։

Գնահատվել են նաև Հարավային Կովկասի և տարածաշրջանի երկրների արտաքին առևտրային ինտեգրման հնարավորությունները՝ կիրառելով ապրանքների և ծառայությունների մասնագիտացման աստիճանների, ընդհանուր մասնագիտացման ցուցանիշների և համեմատական առավելությունների գործակիցների (CCA) հաշվարկներ։ Վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ տարածաշրջանի երկրներում արտաքին առևտրի զարգացումը մեծապես պայմանավորված է ոչ միայն տնտեսական գործոններով, այլ նաև աշխարհաքաղաքական սահմանափակումներով, հակամարտություններով, փակ սահմաններով, միջազգային պատժամիջոցներով և տրանսպորտային մեկուսացմամբ։

Հետազոտությունը ցույց է տվել, որ Ռուսաստանը և Ադրբեջանը տարածաշրջանում ունեն արտահայտված համեմատական առավելություններ՝ համապատասխանաբար 27.03% և 50.45% ՀԱԳ ցուցանիշներով, ինչը պայմանավորված է հումքային և էներգակիրների արտահանման գերակշռությամբ։ Միևնույն ժամանակ Հայաստանը և Վրաստանը ունեն բացասական համեմատական առավելությունների ցուցանիշներ՝ համապատասխանաբար -14.61% և -12.36%, ինչը վկայում է ներմուծումային կախվածության և արտահանման սահմանափակ մրցունակության մասին։

Իրականացվել է նաև Հայաստանի և տարածաշրջանի երկրների միջև առևտրային պոտենցիալի գնահատում՝ դասական գրավիտացիոն մոդելի կիրառմամբ։ Հաշվարկները ցույց են տվել, որ Հայաստանի ամենամեծ չիրացված առևտրային ներուժը ձևավորվում է Թուրքիայի հետ, ինչը պայմանավորված է Թուրքիայի խոշոր տնտեսական ծավալով և աշխարհագրական մոտիկությամբ։ Սակայն քաղաքական և պատմական պատճառներով այդ ներուժը ներկայումս ամբողջությամբ չի օգտագործվում։ Միաժամանակ ընդգծվել է Ռուսաստանի, Իրանի և Վրաստանի հետ տնտեսական կապերի խորացման կարևորությունը՝ տարածաշրջանային ինտեգրման և արտաքին առևտրի դիվերսիֆիկացման տեսանկյունից։



Գծապատկեր 6. Հարավային կովկասի և տարածաշրջանի երկրների ապրանքների և ծառայությունների մասնագիտացման աստիճանների, համեմատական առավելությունների գործակիցները և ընդհանուր մասնագիտացման աստիճանը 2000-2023 թթ.

Վերլուծության արդյունքում հիմնավորվել է, որ Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման համար առաջնահերթ նշանակություն ունեն լոգիստիկ ենթակառուցվածքների արդիականացումը, մաքսային գործընթացների թվայնացումը, միջմոդալ տրանսպորտային կապերի զարգացումը, արտահանման կառուցվածքի բազմազանեցումը և նոր շուկաների որոնումը: Հատկապես կարևորվել է տարածաշրջանային համագործակցության խորացումը և Գլոբալ Հարավի երկրների հետ տնտեսական կապերի ընդլայնումը, ինչը կարող է նպաստել արտաքին տնտեսական կախվածության նվազեցմանը, արտահանման մրցունակության բարձրացմանը և Հայաստանի տնտեսական անվտանգության ամրապնդմանը:

Ատենախոսության <<Եզրակացություններ>> բաժնում ընդհանրացվել և ամփոփվել են հետազոտության հիմնական արդյունքները, որոնք ներկայացված են հետևյալ դրույթներով.

Եզրակացությունները

Յուրաքանչյուր տնտեսության ինչպես վիճակի, այնպես էլ տնտեսական կապերի ինտենսիվության, այդ կապերի արդյունավետության ամփոփ ցուցանիշների (բնութագրիչների) համակարգում ուրույն և առանձնահատուկ տեղ ունի վճարային հաշվեկշիռը: Վճարային հաշվեկշռի միջոցով կարելի է պատկերացում կազմել և գնահատել ինչպես երկրի տնտեսական ներուժի, այնպես էլ հատկապես արտաքին աշխարհի հետ տնտեսական հարաբերությունների ինչպես հետևանքները, այնպես էլ արդյունքները: Նշված խնդիրը հատկապես կարևոր է դառնում փոքր և բաց տնտեսություն ունեցող երկրների համար, որոնց տնտեսության վրա առանձնապես մեծ է համաշխարհային տնտեսության ազդեցությունը: Այդ ազդեցության ինչպես գնահատումը, այնպես էլ տնտեսության նոր ոլորտներ մտնելու, երկրի արտահանման

և ներմուծման ուղղությունները և ծավալները փոփոխելը էական ազդեցություն են թողնում տվյալ երկրի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ յուրաքանչյուր քաղաքացու կենսամակարդակի բարձրացման գործում: Համաշխարհային տնտեսության գլոբալացման և ինտեգրման պայմաններում արտաքին տնտեսական հարաբերությունների արդյունավետ կառուցումը և կառավարումը դառնում է վճռական հատկապես աշխարհաքաղաքական զարգացումների նոր աշխարհակարգի կառուցման շեմին: Ըստ էության, պետության վճարային հաշվեկշիռը իր ուրույն գործիքակազմով այն հայելին է, որը բնութագրում է ազգային տնտեսության արտադրության գործոնների՝ ապրանքների և ծառայությունների, աշխատուժի, կապիտալի և ֆինանսական այլ հոսքերի շարժը աշխարհի մյուս երկրների հետ: Վճարային հաշվեկշիռների ուսումնասիրության և վերլուծության հիման վրա քննարկվել են մի խումբ երկրների, այդ թվում նաև տարածաշրջանի երկրների վճարային հաշվեկշիռների առանձին բաղադրիչները, կատարվել են դրանց առանձին համեմատություններ ինչպես առանձին կառուցվածքային միավորումների, այնպես էլ առանձին խումբ երկրների համար: Հայաստանը նշված ժամանակահատվածում հիմնականում պահպանել են բացասական վճարային հաշվեկշիռ, ինչը վկայում է ներմուծման գերակշռության և արտաքին կախվածության մասին, թեև առանձին տարիներին (օրինակ՝ Հայաստան՝ 2022թ.) նկատվում են կարճաժամկետ բարելավումներ

Ցամաքով շրջապատված երկրները (այսուհետ՝ ՑՇԵ) յուրահատուկ աշխարհագրական և տնտեսական իրավիճակում գտնվող պետություններ են, որոնք չունեն ուղղակի մուտք դեպի ծովային նավահանգիստներ: Այս սահմանափակումը առաջացնում է լրացուցիչ առևտրային ծախսեր՝ փոխադրման և լոգիստիկ ծախսերի տեսքով, ինչպես նաև սահմանափակում է արտաքին շուկաների հասանելիությունը, նվազեցնում տնտեսության մրցունակությունը: Վերլուծվել է ՑՇԵ-ների զարգացման հիմնախնդիրները, դրանց հաղթահարման ռազմավարությունները, ինչպես նաև դրանց կիրառելիությունը Հայաստանի Հանրապետության օրինակով, որպես ցամաքով շրջապատված երկրներից մեկի: Մեթոդաբանորեն կիրառվել են գրականության վերլուծություն, համեմատական գնահատում և կոնկրետ դեպքի ուսումնասիրություն՝ հիմնված բաց աղբյուրների, միջազգային զեկույցների և վիճակագրական տվյալների վրա:

Հատուկ ուշադրություն է դարձվել տրանսպորտային մեկուսացման ազդեցությանը տնտեսական կառուցվածքի վրա, արտահանման դիվերսիֆիկացման մարտահրավերներին և տարածաշրջանային համագործակցության հնարավորություններին: Հայաստանի Հանրապետության օրինակով վերլուծվել է, թե ինչպես է սահմանափակ մուտքը դեպի միջազգային նավահանգիստներ ազդում առևտրային հոսքերի, ներդրումային գրավչության և սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Ուսումնասիրության արդյունքները ցույց են տալիս, որ ՑՇԵ-ները կարող են մեղմել իրենց աշխարհագրական թերությունները՝ ներդրումներ կատարելով ենթակառուցվածքներում, խթանելով բազմակողմ համագործակցությունը և մասնակցելով միջազգային տնտեսական ինտեգրման գործընթացներին: Այս ուղիները կարող են ապահովել կայուն զարգացում նույնիսկ առավել սահմանափակ պայմաններում: 2020–2024 թվականներին ցամաքով շրջապատված 36 երկրների վճարային հաշվեկշիռների միջին տարեկան արդյունքները ցույց են տալիս, որ դրանց

համակցված ընթացիկ հաշիվը կազմել է շուրջ -25.5 մլրդ ԱՄՆ դոլար, իսկ ֆինանսական հաշիվը՝ -37.4 մլրդ դոլար։ Միաժամանակ, կապիտալի հաշվի գծով արձանագրվել է մոտ 13.0 մլրդ դոլարի դրական մնացորդ։

Վճարային հաշվեկշռի միջին տարեկան մնացորդը կազմել է շուրջ -76.5 մլրդ ԱՄՆ դոլար, ինչը վկայում է, որ ցամաքով շրջապատված երկրների մեծ մասը շարունակում է ունենալ արտաքին ֆինանսական խոցելիություն և արտարժութային սահմանափակումներ։

Հայաստանի տնտեսության կառուցվածքային զարգացման արդի խնդիրներն առավել քան երբևէ պայմանավորված են տնտեսական բարդության և նորարարության մակարդակով, որոնք մրցունակության և կայուն աճի առանցքային ցուցանիշներ են։ Աշխարհաքաղաքական և տնտեսական անկայունության պայմաններում առավել կարևոր է դառնում տնտեսության դիվերսիֆիկացիան, տեխնոլոգիական արդիականացումը և գիտելիքահենք զարգացման մոդելի կիրարկումը։ Հայաստանի Հանրապետության տնտեսությունը, լինելով փոքր, բաց և արտահանումից կախված, կանգնած է լրջագույն մարտահրավերների առջև, սակայն միաժամանակ ունի մրցակցային վերափոխման ներուժ՝ մարդկային կապիտալի, նորարարական ներուժի և տարածաշրջանային համագործակցության շնորհիվ։

Վերլուծության արդյունքները ցույց են տալիս, որ Հայաստանի Հանրապետության տնտեսության բարդության ցուցանիշը վերջին տասնամյակներում կտրուկ նվազել է՝ շուրջ 50 հորիզոնականով գլոբալ վարկանիշում։ Նման հետընթացը պայմանավորված է տեխնոլոգիական ոլորտների թուլացմամբ, գիտահետազոտական ծախսերի ցածր մակարդակով և ցածր ավելացված արժեք ստեղծող արտադրությամբ։ Միևնույն ժամանակ, նորարարության համաշխարհային ինդեքսում (GII) Հայաստանի Հանրապետությունը 2022-2023 թվականներին գտնվել է միջին մակարդակում՝ զգալիորեն զիջելով Վրաստանին և Թուրքիային։

Տնտեսության բարդության բարձրացման և նորարարական ներուժի ամրապնդման համար Հայաստանը պետք է հետևողականորեն իրականացնի կրթական և գիտական համակարգերի բարեփոխումներ, խթանի տեխնոլոգիական ձեռնարկատիրությունը և ապահովի գիտական արդյունքների առևտրայնացում։ Վերջին տարիների դրական միտումները՝ մասնավորապես SS ոլորտում ստարտափ նախաձեռնությունների ակտիվացումը, պետք է վերածվեն համակարգային հաջողության՝ ընդլայնելով արդյունաբերական կիրառությունները և արտահանման կառուցվածքի տեխնոլոգիական բարդությունը։

Հարավային Կովկասի երկրների համադրական վերլուծությունը ևս փաստում է, որ տարածաշրջանում մրցունակությունը որոշվում է ոչ միայն ռեսուրսների առկայությամբ, այլև նորարարական քաղաքականությունների իրականացմամբ և ինստիտուցիոնալ կարողությունների ձևավորմամբ։ Վրաստանի փորձը կրթական բարեփոխումների և գործարար միջավայրի բարելավման շնորհիվ նրան բերել է տարածաշրջանային առաջատար դիրք։ Հայաստանի դեպքում անհրաժեշտ է ռազմավարական փաստաթղթերում նշված տեսլականների արդյունավետ կիրարկում՝ ձևավորելով չափելի արդյունքներով գործողությունների ծրագրեր։

Հետազոտությունը հիմնված է միջազգային ցուցանիշների (GII, World Bank, Atlas of Economic Complexity) համադրական և ժամանակային վերլուծության վրա, ներառելով ինչպես Հայաստանի, այնպես էլ հարևան և համադրելի երկրների

տվյալները։ Մեթոդաբանությունը ներառում է տնտեսական բարդության, նորարարության մակարդակի արդյունավետության միաժամանակյա գնահատում՝ ապահովելով վերլուծության ամբողջականություն և քաղաքական առաջարկությունների հիմնավորվածություն։

Այս առումով՝ Հայաստանի համար տնտեսական քաղաքականության հիմնական ուղենիշը պետք է լինի գիտահետազոտական ներուժի զարգացումը, կրթության և նորարարության ոլորտների ֆինանսավորման ավելացումը, ինչպես նաև բիզնեսի և գիտության համագործակցության խթանումը՝ տնտեսական կառուցվածքը տեխնոլոգիական բարդությամբ հարստացնելու նպատակով։ Միայն այս կերպ հնարավոր կլինի վերադառնալ այն բարձր դիրքերին, որոնք Հայաստանը զբաղեցնում էր նախկինում՝ որպես տարածաշրջանում գիտատեխնիկական առաջատար երկիր։

Աշխարհի երկրների եկամտային դասակարգման և նորարարական արդյունքների համադրությունը վկայում է այն մասին, որ տնտեսական բարեկեցությունն ու նորարարությունը, չնայած դրական փոխազդեցությանը, չեն շարժվում գծային համընթացությամբ. միջին կամ նույնիսկ ցածր եկամուտ ունեցող որոշ երկրներ կարող են ցուցադրել համեմատաբար բարձր նորարարական ակտիվություն՝ պայմանավորված ինստիտուցիոնալ բարեփոխումներով, մարդկային կապիտալի կարողություններով և ռազմավարական ներդրումային քաղաքականությամբ։

Հետազոտությունն ընդգրկում է բազմամակարդակ դիտարկում՝ ներառելով ցածր, միջինից ցածր, միջինից բարձր և բարձր եկամտային երկրների համեմատությունը՝ GNI-ի Ատլաս և PPP մեթոդներով հաշվարկված ցուցանիշներով։ Ուսումնասիրվել են հատկապես Հարավային Կովկասի երկրները՝ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը, որոնք դասվում են միջինից բարձր եկամուտ ունեցողների խմբում, սակայն տարբեր արդյունքներ են ցուցաբերում նորարարական ոլորտում։ Մասնավորապես, Հայաստանը GNI-ով որոշ չափով գերազանցում է իր հարևաններին, սակայն նորարարական վարկանիշում զիջում է Վրաստանին։

Նորարարության զարգացման տեսանկյունից կարևոր է ընդգծել այն դիտարկումը, որ եկամուտն ինքնին բավարար չէ՝ բարձր նորարարական արդյունքներ գրանցելու համար։ Արդյունավետ կառավարումը, գիտահետազոտական ծախսերի համարժեք ֆինանսավորումը, տեխնոլոգիական փոխանցման մեխանիզմների առկայությունը և բիզնեսի ու կրթական համակարգի համագործակցությունը հանդիսանում են որոշիչ գործոններ։ Այս հարցում առանձնանում են Չինաստանի, Հնդկաստանի և Վիետնամի օրինակները, որոնք, չլինելով բարձր եկամտային տնտեսություններ, հասել են զգալի հաջողությունների GII վարկանիշում։

Հայաստանի պարագայում, չնայած GNI-ի որոշակի աճին, նորարարության ինդեքսով երկիրը շարունակում է մնալ միջին մակարդակում՝ ցույց տալով համակարգային բացերի առկայությունը գիտահետազոտական ծախսերում, ինստիտուցիոնալ համադրման և ռազմավարական արդյունքի մշակման մակարդակում։ Այս համատեքստում կարևորվում է Հայաստանի տնտեսական քաղաքականության 2023–2030 թվականների հայեցակարգի վերանայման անհրաժեշտությունը՝ այն դարձնելու համար ոչ թե միայն հռչակագրային փաստաթուղթ, այլ արդյունքակենտրոն զարգացման ռազմավարություն։

Նորարարության և եկամտի կապը հիմնարար նշանակություն ունի ժամանակակից տնտեսագիտական վերլուծություններում։ Սակայն իրական

զարգացումների համար անհրաժեշտ է երկկողմ ներդրում՝ ինչպես տնտեսական քաղաքականության միջոցով եկամտային հիմքի ձևավորում, այնպես էլ կրթական, գիտական և տեխնոլոգիական միջավայրի զարգացման միջոցով նորարարական ներուժի ակտիվացում: Սա է այն առանցքը, որի շուրջ պետք է ձևավորվի ապագայի ներառական և մրցունակ տնտեսությունը:

• Տնտեսական անվտանգությունը հանդիսանում է յուրաքանչյուր պետության սոցիալ-տնտեսական համակարգի կայունության, ինքնաբավ զարգացման և ռազմավարական դիմակայունության կարևորագույն հիմնասյուներից: Այն արտահայտում է պետության կարողությունը կանխելու այն ներքին և արտաքին սպառնալիքները, որոնք կարող են խաթարել տնտեսական աճի տեմպերը, աշխատաշուկայի արդյունավետությունը, ֆինանսական համակարգի կայունությունը և կենսապահովման նվազագույն մակարդակի երաշխավորումը: Տնտեսական անվտանգության մակարդակի գնահատումը հնարավոր է ինչպես մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների՝ ՀՆԱ-ի, գնաճի, պետական պարտքի, վճարային հաշվեկշռի և բյուջեի դեֆիցիտի հիման վրա, այնպես էլ՝ արտաքին տնտեսական ցնցումների հանդեպ տնտեսության դիմադրողականության համատեքստում:

Հայաստանի Հանրապետության պարագայում տնտեսական անվտանգության խնդիրը առավել սրվեց վերջին տարիների տարածաշրջանային անկայունության, աշխարհաքաղաքական փոփոխությունների և տնտեսական փոխկապակցվածությունների խորացման պայմաններում: 2020 թվականից հետո՝ անվտանգության միջավայրի փոփոխության և համաշխարհային ռիսկերից բխող ազդեցությունների խորացման պայմաններում, ակնհայտ դարձավ տեղական արտադրության զարգացման, ռազմավարական ոլորտների վերանայման և տնտեսական բազմազանեցման անհրաժեշտությունը, ինչպես նաև տնտեսության զարգացման առաջնահերթությունների նշանակությունը: Հատկապես կարևորվում է սննդի, դեղորայքի, էներգետիկայի և ռազմարդյունաբերական ոլորտների կայունացումը՝ որպես տնտեսության առանցքային օղակներ, որոնք ունակ են ապահովել ինքնաբավություն և ճգնաժամային դիմակայունություն:

Տնտեսական անվտանգության մակարդակը բարձրացնելու համար անհրաժեշտ է իրականացնել մի շարք փոխկապակցված քայլեր: Առաջնահերթություն պետք է տրվի ռիսկերին արձագանքման հստակ կառուցակարգերի ձևավորմանը, ներառյալ վաղ նախազգուշացման համակարգերը: Պետական քաղաքականությունը պետք է խթանի տեղական արդյունաբերության զարգացումը՝ ներմուծման փոխարինման սկզբունքով՝ առանց վնասելու ազատ մրցակցության կանոնները: Արտահանման շուկաների դիվերսիֆիկացումը և կախվածության նվազեցումը միակողմանի առևտրային գործընկերներից թույլ կտա նվազեցնել արտաքին ցնցումների ազդեցությունը: Բացի այդ, անհրաժեշտ է ձևավորել ազգային պահուստային ֆոնդեր և ճգնաժամային ռեզերվներ, որոնք կծառայեն որպես տնտեսության բուֆեր հնարավոր արտակարգ իրավիճակների ժամանակ:

Տնտեսական անվտանգությունը պետք է դիտարկել որպես կայուն զարգացման, սոցիալական պաշտպանվածության և ազգային անվտանգության ամրապնդման նախապայման: Դրա ապահովման համար Հայաստանի Հանրապետությունը պետք է որդեգրի համապարփակ մոտեցում, որը կներառի միաժամանակ և՛ տնտեսական արդյունավետության բարձրացումը, և՛ տեխնոլոգիական առաջընթացը, և՛

ինստիտուցիոնալ կայունության ամրապնդումը: Միայն այսպիսի համակարգված ռազմավարության միջոցով հնարավոր կլինի կառուցել կենսունակ, ճկուն և դիմակայուն պետություն՝ պատրաստ դիմագրավելու ներկա և ապագա մարտահրավերներին:

Տնտեսական անվտանգությունը, որպես ազգային անվտանգության առանցքային բաղադրիչ, ընդգրկում է երկրի տնտեսական համակարգի կենսունակությունն ու կայունությունը պահպանելու, ներքին ու արտաքին սպառնալիքներին դիմագրավելու և երկարաժամկետ զարգացման նպատակը իրագործելու կարողությունը: Տնտեսական անվտանգության գնահատումը ոչ միայն վիճակագրական ցուցանիշների վրա հիմնված վերլուծություն է, այլ նաև ռազմավարական գործընթաց՝ ուղղված կառավարման և քաղաքականության հստակեցմանը:

Վերլուծության հիմքում դրված են երկու փոխլրացնող մեթոդներ՝ բալային գնահատման մեթոդը և մատրիցային մոտեցումը: Առաջինը ապահովում է տնտեսական անվտանգության մակարդակի քանակական գնահատումը՝ յուրաքանչյուր ցուցանիշի շեղումը սահմանային շեմից արտահայտելով 0-ից 1 բալերի միջակայքով: Ստացված գնահատականների կշռված միջինը հանդիսանում է տնտեսության ընդհանուր անվտանգության աստիճանի՝ «գլխավոր հատկանիշի» հիմքը:

Մատրիցային մեթոդը, իր հերթին, ցուցանիշները դասակարգում է ըստ վտանգի առաջացման հավանականության, ազդեցության, տևողության և փոփոխման արագության՝ ձևավորելով 9 վանդակ ունեցող գնահատման համակարգ: Այս մոտեցումը ոչ միայն հնարավորություն է տալիս գնահատել կոնկրետ ցուցանիշի վտանգավորության աստիճանը, այլև կանխատեսել փոխազդեցությունները տնտեսության այլ ցուցանիշների և ոլորտների վրա: Հատկապես արժեքավոր է այն, որ այս մեթոդը հստակ սահմանում է առաջնահերթ գործողությունների ուղղությունները՝ ըստ ցուցանիշների գտնվելու վանդակի:

Մեթոդաբանության կիրառման առավելությունները բազմաթիվ են. դրանք ներառում են պաշտոնական և հասանելի տվյալների օգտագործումը, բարդ հաշվարկների ավտոմատացման հնարավորությունը, ցուցանիշների բազմազանության հանդեպ ճկուն մոտեցումը և արդյունքների համադրելիության ապահովումը ինչպես տարբեր ժամանակահատվածների, այնպես էլ տարբեր երկրների միջև: Այս մեթոդները կիրառելի են ոչ միայն տնտեսական անվտանգության գնահատման համար, այլ նաև այլ ոլորտների՝ պարենային, էներգետիկ, կիբեռանվտանգության, տնտեսական ազատություն և տեղեկատվական անվտանգության մակարդակների վերլուծության շրջանակում:

Վերլուծությունը ցույց է տալիս, որ տնտեսության անվտանգությունը չի սահմանափակվում միայն մակրոտնտեսական ցուցանիշների գնահատմամբ: Այն պահանջում է ինստիտուցիոնալ բարեփոխումներ, դիվերսիֆիկացված տնտեսական կառուցվածք, կանխատեսելի քաղաքականություն, ինչպես նաև նորարարական ներուժի զարգացում: Գործնականում, որքան բարձր է տնտեսության դիվերսիֆիկացիայի մակարդակը և կառավարման կանխատեսելիությունը, այնքան կայուն է տնտեսական համակարգը արտաքին և ներքին ցնցումների (շոկերի) նկատմամբ:

Ներկայացված համակցված մեթոդաբանությունը ձևավորում է տնտեսական անվտանգության գնահատման կիրառական գործիք, որն ունի տեսական հիմնավորում, փորձագիտական հենարան և գործնական կիրառելիություն։ Այն ոչ միայն հաստատում է տնտեսական անվտանգության համակարգային ընկալման անհրաժեշտությունը, այլև նպաստում է տնտեսական քաղաքականության վերլուծության և վերափոխման ավելի գիտական ու կառուցվածքային մոտեցման ձևավորմանը։ Ընդհանուր առմամբ, առաջարկվող գնահատման համակարգը հանդիսանում է վստահելի հենք՝ արդյունավետ սոցիալ-տնտեսական կառավարման և ազգային անվտանգային ռազմավարության մշակման համար, դրանով իսկ մատնանշելով առաջիկա տնտեսական քաղաքականության իրականացման առաջնահերթությունները։

Տնտեսական անվտանգությունը արտացոլում է պետության կարողունակությունը՝ կանխատեսելու, դիմագրավելու և կառավարելու տնտեսական սպառնալիքները՝ միաժամանակ ապահովելով շարունակական աճի հնարավորությունները։ Տնտեսական անվտանգության գնահատումը հիմնված է բազմակողմանի համակարգի վրա, որը ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական բաղադրիչներ՝ ցուցանիշների, շեմային արժեքների և մոդելային մոտեցումների համադրմամբ։

Ցուցանիշները խմբավորվում են երեք գլխավոր կատեգորիաներում՝ համեմատվող, բացարձակ և համամասնական։ Բացարձակ արժեքներով չափվող ցուցանիշները (օրինակ՝ մեկ շնչի հաշվով ՀՆԱ և միջին աշխատավարձ) վերածվում են հարաբերական գնահատականների՝ ապահովելով ցուցանիշների ամբողջական համադրելիություն։ Այսպիսով, անկախ չափման եղանակից, բոլոր ցուցանիշները բերվում են ընդհանուր չափորոշիչի՝ հնարավոր դարձնելով համատեղ հաշվարկները։

Միջազգային փորձի և վիճակագրական աղբյուրների հիման վրա սահմանվում են ցուցանիշների շեմային մեծությունները, որոնք կիրառվում են ինչպես հարաբերական, այնպես էլ բացարձակ ցուցանիշների դեպքում։ Սա թույլ է տալիս ապահովել տվյալների հավատարմությունն ու համադրելիությունը ինչպես տասնամյակային կտրվածքով, այնպես էլ երկրների միջև։ Ընդ որում, գնահատման համակարգը կարող է կիրառվել ոչ միայն տարեկան տվյալների, այլև կիսամյակային, եռամսյակային և ամսական հատվածներում՝ դարձնելով մեթոդաբանությունը ճկուն և համապարփակ։

Վերլուծության առանձնահատկություններից է այն, որ տարբեր մակրոտնտեսական ցուցանիշների թվային համադրությունը հիմնավորված է մաթեմատիկական և տնտեսագիտական տրամաբանությամբ։ Թեև թվացյալ տարբեր բովանդակությամբ ցուցանիշները միավորվում են մեկ գնահատականի մեջ, դրանք համադրվում են արժեքային արտահայտությամբ կամ բալային համաչափ սանդղակով, որը վերացնում է անհամադրելիության ռիսկը։ Այս մոտեցումը, օրինակներով հաստատված, կիրառվում է ինչպես ՀՆԱ-ի հաշվարկներում, այնպես էլ սոցիալ-ժողովրդագրական կամ արտաքին առևտրի կառուցվածքային գնահատումներում։

Արժանահիշատակ է այն, որ ներկայացված մեթոդաբանությունը կարող է կիրառվել ոչ միայն տնտեսական անվտանգության, այլև ազգային անվտանգության այլ բաղադրիչների՝ պարենային, էներգետիկ, տեղեկատվական, էկոլոգիական և կիբեռանվտանգության գնահատման համար, եթե առկա են համապատասխան շեմային և փաստացի տվյալներ։ Այսպիսով, մշակվել է համընդհանուր կիրառելի

համակարգ, որն ուղենշում է պետական քաղաքականության առաջնահերթ ուղղությունները՝ տվյալների հիման վրա վերլուծության և որոշումների կայացման միջոցով։

Տնտեսական անվտանգության այս չափումն ու վերլուծությունը հնարավորություն են տալիս ոչ միայն գնահատել անցյալը, այլ նաև կանխատեսել ապագան։ Վերլուծական մեթոդների կիրառումը, մատրիցների և բալային գնահատման համադրմամբ, ձևավորում են տեղեկատվության այնպիսի համակարգ, որը նպաստում է պետական կառավարման արդյունավետության բարձրացմանը, ռիսկերին դիմակայելու կարողության ամրապնդմանը և տնտեսական զարգացման ռազմավարական ուղիների ճշգրտմանը և դրանց հիման վրա սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունների բացահայտմանը։

Հայաստանի Հանրապետության տնտեսության բարդության, նորարարական կարողությունների և ազգային հարստության արդյունավետության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ երկրի երկարաժամկետ տնտեսական զարգացման և միջազգային մրցունակության ապահովման համար առանցքային նշանակություն ունեն տնտեսության կառուցվածքային դիվերսիֆիկացումը, գիտելիքահենք արտադրության զարգացումը և տեխնոլոգիական առաջընթացի խթանումը։ Հետազոտության արդյունքները վկայում են, որ Հայաստանի տնտեսությունը վերջին տասնամյակներում բախվել է կառուցվածքային պարզեցման և արտահանման տեխնոլոգիական բարդության նվազման խնդիրների, ինչը բացասաբար է անդրադարձել երկրի մրցունակության և նորարարական ներուժի վրա։

Տնտեսության բարդության ինդեքսի (ECI) վերլուծությունը ցույց է տալիս, որ Հայաստանը 1996–2002 թվականներին ունեցել է համեմատաբար բարձր դիրքեր՝ գտնվելով միջինում 35.9 հորիզոնականում, սակայն հետագա տարիներին արձանագրվել է շարունակական վատթարացում՝ 2015–2019 թվականներին հասնելով 73.2-ի։ Չնայած 2020–2024 թվականներին արձանագրված որոշակի բարելավմանը (53.6), երկիրը դեռևս զգալիորեն զիջում է բարձր տեխնոլոգիական և դիվերսիֆիկացված տնտեսություններ ունեցող երկրներին։ Այս միտումները վկայում են, որ Հայաստանի տնտեսության կառուցվածքում շարունակում են գերակշռել ցածր ավելացված արժեք ունեցող ոլորտները, իսկ արտահանման զամբյուղի բազմազանությունը մնում է սահմանափակ։

Նորարարության համաշխարհային ինդեքսի (GII) տվյալների վերլուծությունը ևս հաստատում է, որ Հայաստանի նորարարական համակարգը շարունակում է մնալ միջին մակարդակում։ Եթե 2022 թվականին Հայաստանը զբաղեցրել է 80-րդ տեղը՝ 26.6 միավորով, ապա 2025 թվականին արձանագրվել է որոշակի առաջընթաց՝ 59-րդ տեղ և 30.4 միավոր։ Սակայն տարածաշրջանային համատեքստում Հայաստանը դեռևս զիջում է Բալթյան երկրներին և մի շարք զարգացող տնտեսություններին, ինչը պայմանավորված է գիտահետազոտական ծախսերի ցածր մակարդակով, գիտական արդյունքների առևտրայնացման սահմանափակ հնարավորություններով և գիտության ու բիզնեսի միջև թույլ կապերով։

Հարավային Կովկասի երկրների համեմատական վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանում առավել բարձր նորարարական ցուցանիշներ ունի Վրաստանը, մինչդեռ Ադրբեջանը շարունակում է պահպանել համեմատաբար ցածր դիրքեր՝ տնտեսության հումքային կառուցվածքի պատճառով։ Հայաստանը տարածաշրջանում

պահպանում է որոշակի մրցակցային առավելություններ՝ հատկապես մարդկային կապիտալի և տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտներում, սակայն այդ ներուժը դեռևս ամբողջությամբ չի վերածվում բարձր տեխնոլոգիական արտադրության և արտահանման աճի։

Ազգային հարստության արդյունավետության գնահատումը ցույց է տալիս, որ Հայաստանը, չնայած նախկին Խորհրդային Միության երկրների շարքում համեմատաբար բարձր դիրք ունենալուն, զգալիորեն հետ է մնում հարևան երկրների՝ Թուրքիայի, Ադրբեջանի և Վրաստանի ցուցանիշներից։ Սա վկայում է, որ երկրի կուտակված կապիտալն ու ռեսուրսները դեռևս բավարար արդյունավետությամբ չեն վերածվում տնտեսական արդյունքների և բարձր արտադրողականության։

Ուսումնասիրությունը հաստատում է, որ տնտեսության բարդության և նորարարական կարողությունների բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել համակարգային և երկարաժամկետ քաղաքականություն, որը կներառի գիտահետազոտական ծախսերի ավելացում, տեխնոլոգիական և գիտահեն ձեռնարկությունների զարգացում, կրթության և մարդկային կապիտալի կատարելագործում, ինչպես նաև արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացում։ Միաժամանակ կարևոր է ապահովել գիտական արդյունքների առևտրայնացման և գիտության ու արտադրության միջև արդյունավետ համագործակցության մեխանիզմների ձևավորումը։

Այսպիսով, Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման ռազմավարության առանցքային ուղղությունը պետք է լինի բարձր բարդության և գիտելիքահենք տնտեսության ձևավորումը, որը հնարավորություն կտա բարձրացնել երկրի միջազգային մրցունակությունը, ապահովել կայուն տնտեսական աճ և նվազեցնել արտաքին տնտեսական ռիսկերի նկատմամբ խոցելիությունը։ Տնտեսության բարդության, նորարարության և ազգային հարստության արդյունավետության փոխկապակցված զարգացումը կարող է դառնալ Հայաստանի երկարաժամկետ սոցիալ-տնտեսական առաջընթացի կարևորագույն նախադրյալը։

Հարավային Կովկասի երեք հանրապետությունների՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական անվտանգության համադրական գնահատումը հնարավորություն է տալիս ոչ միայն բացահայտել տարածաշրջանի երկրների տնտեսական կայունության և խոցելիության մակարդակները, այլև գնահատել դրանց միջև տնտեսական համագործակցության և ինտեգրման հիմնավորվածությունը։ Տնտեսական անվտանգության մակարդակների տարբերությունները վկայում են, որ տարածաշրջանի երկրները գտնվում են տնտեսական զարգացման և ռիսկերի կառավարման տարբեր փուլերում, ինչը կարևոր նշանակություն ունի ինչպես տարածաշրջանային քաղաքականության, այնպես էլ տնտեսական միավորումների ձևավորման տեսանկյունից։

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ դիտարկվող ժամանակահատվածում տնտեսական անվտանգության ամենաբարձր մակարդակը հիմնականում արձանագրվել է Ադրբեջանում՝ հատկապես 2001–2016 թվականներին, ինչը պայմանավորված է նավթագազային եկամուտների աճով և արտահանման բարձր մակարդակով։ Սակայն 2012–2016 թվականներից հետո Ադրբեջանում նկատվել է տնտեսական անվտանգության որոշակի թուլացում, թեև վերջին տարիներին կրկին արձանագրվել է աճ՝ հասնելով 15.1 բալային միավորի։

Հայաստանի Հանրապետությունում տնտեսական անվտանգության մակարդակը 1995–2000 թվականներին աճել է առավել արագ տեմպերով՝ պայմանավորված 1990-ական թվականների վերջից իրականացված համակարգային տնտեսական բարեփոխումներով: Սակայն 2001–2016 թվականներին արձանագրվել է տնտեսական անվտանգության ցուցանիշների հարաբերական լճացում՝ 11.3 բալային միավորից նվազելով մինչև 10.9 բալային միավոր: Միայն 2017 թվականից հետո նկատվել է որոշակի բարելավում, թեև COVID-19 համավարակը և 2020 թվականի պատերազմը բացասաբար են անդրադարձել մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների վրա: 2023–2024 թվականներին Հայաստանի տնտեսական անվտանգության ցուցանիշը կազմել է 11.4 բալային միավոր:

Վրաստանի տնտեսական անվտանգության մակարդակը երկար ժամանակ պահպանվել է տարածաշրջանի համեմատաբար ցածր դիրքերում, սակայն վերջին տարիներին արձանագրվել է զգալի առաջընթաց: Մասնավորապես, 2017–2022 թվականների 10.0 բալային միավորից այն 2023–2024 թվականներին հասել է 14.3 բալային միավորի՝ արձանագրելով տարածաշրջանում ամենաբարձր աճը:

Մատրիցային վերլուծությունը հնարավորություն է տվել բացահայտել տնտեսական անվտանգության առավել վտանգավոր և առաջնահերթ լուծում պահանջող ցուցանիշները: Հայաստանի պարագայում առավել խոցելի են ներդրումային ակտիվության ցածր մակարդակը (ՏԱՑ 13), տնտեսական աճի անկայուն տեմպերը (ՏԱՑ 7), ինչպես նաև բյուջետային և ֆինանսական հավասարակշռության հետ կապված ռիսկերը (ՏԱՑ 17): Ադրբեջանում հիմնական ռիսկերը վերաբերում են տնտեսական աճի, գնաճի և ներդրումային կախվածության ցուցանիշներին, իսկ Վրաստանում՝ արտաքին կախվածությանը, ներմուծման բարձր մակարդակին և ներդրումային ակտիվության խնդիրներին:

Միաժամանակ, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հարավային Կովկասի բոլոր երեք հանրապետություններում պահպանվում են տնտեսական անվտանգության ընդհանուր մարտահրավերներ՝ կապված արտաքին շուկաներից կախվածության, ներդրումային միջավայրի խոցելիության, ներմուծման բարձր մակարդակի և տնտեսական աճի անկայունության հետ: Այս հանգամանքները պահանջում են երկարաժամկետ ռազմավարական քաղաքականություն՝ ուղղված տնտեսության դիվերսիֆիկացմանը, արտադրական և տեխնոլոգիական ներուժի զարգացմանը, ինչպես նաև տարածաշրջանային համագործակցության խորացմանը:

• Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական ցուցանիշների շարժը և դրանց ազդեցությունը տնտեսության վերարտադրության ներուժի վրա վերլուծությունն իրականացվել է՝ համադրելով տեսական մոտեցումներ, էմպիրիկ դիտարկումներ և պաշտոնական վիճակագրական տվյալներ՝ ընդգրկելով 1985–2024 թվականների ժամանակահատվածը: Հիմնական շեշտը դրվել է համախառն ավելացված արժեքի կառուցվածքային շարժերի և տնտեսության ոլորտների արդյունավետության վրա՝ ուսումնասիրելով արդյունաբերության, գյուղատնտեսության, շինարարության, առևտրի և ծառայությունների ոլորտները: Քանակական գնահատումը կատարվել է ծախսված ռեսուրսների դիմաց ստացված ավելացված արժեքի հիման վրա, իսկ հավելյալ արդյունքի նորման դիտարկվել է որպես տնտեսության կառավարման արդյունավետության համալիր ցուցանիշ:

Համաշխարհային և տարածաշրջանային համեմատական վերլուծությունների միջոցով հաստատվել է, որ թեև ՀՀ տնտեսությունը ցուցադրել է աճի որոշակի միտումներ, սակայն կառուցվածքային առումով դեռևս առկա են էական մարտահրավերներ, մասնավորապես՝ կապիտալի կուտակման, արտադրողականության բարձրացման և տեխնոլոգիական նորարարությունների ներառման ոլորտներում:

Տնտեսագիտական մոտեցումների համադրմամբ ուսումնասիրվել են ՀՆԱ-ի կառուցվածքի փոփոխությունները, ոլորտային տեղաշարժերը, տնտեսության բացության մակարդակը և արտաքին առևտրի դերը վերարտադրության վրա: Կարևոր դիտարկում է կատարվել նաև վերջնական սպառման և ներդրումների հարաբերակցության վերաբերյալ՝ որպես տնտեսական կայունության ապահովման հիմնարար տարրեր:

Անհրաժեշտություն է առաջացել տնտեսության կառուցվածքային բարեփոխումների, նորարարական տեխնոլոգիաների խթանման և ներառական աճի ապահովման միջոցով բարձրացնել տնտեսության վերարտադրության ներուժը: Այս գործընթացում վճռորոշ նշանակություն ունեն կայուն և պատասխանատու կառավարումը, առաջադեմ գիտատեխնիկական լուծումների ներդրումը և սոցիալ-տնտեսական զարգացման այնպիսի ռազմավարությունների իրականացումը, որոնք կհամադրեն մրցունակությունը, արդյունավետությունն ու սոցիալական համախմբվածությունը՝ տնտեսության երկարաժամկետ զարգացման և ազգային հարստության ավելացման նպատակով:

Իրավիճակային և կառուցվածքային վերլուծության արդյունքում կարելի է արձանագրել, որ Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի արտադրության գործընթացում 2012–2024 թվականներին տեղի են ունեցել մի շարք էական փոփոխություններ՝ ինչպես տնտեսության կառուցվածքի, այնպես էլ տարբեր ոլորտների արդյունավետության մակարդակի առումով: Տնտեսության կառուցվածքի գնահատման համար կիրառված համախառն ավելացված արժեքի և թողարկման վրա հիմնված մեթոդները հնարավորություն են տալիս լիարժեքորեն պատկերացնել ոչ միայն արտադրական ռեսուրսների օգտագործման ծավալները, այլև այդ ռեսուրսների օգտագործման արդյունավետության աստիճանը:

Նախ և առաջ ակնհայտ է, որ դիտարկվող ժամանակահատվածում տեղի է ունեցել գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտի համեմատական նահանջ: Մասնավորապես, ՀՀ-ում այդ ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2018 թվականին կազմել է 13.9%, իսկ 2024 թվականին նվազել է մինչև 7.8%: Սա կարող է բնութագրվել որպես կառուցվածքային տեղաշարժ դեպի արդյունաբերություն, շինարարություն, առևտուր և ծառայություններ: Սակայն միևնույն ժամանակ այն պահանջում է գյուղատնտեսական ոլորտում խորքային բարեփոխումներ՝ ռեսուրսների արդյունավետության բարձրացման և նորարարական գործիքակազմի կիրառման միջոցով:

Արդյունաբերության, ներառյալ շինարարության, ոլորտի տեսակարար կշիռը ՀՀ ՀՆԱ-ում 2018 թվականին կազմել է 24.8%, իսկ 2024 թվականին՝ 22.9%: Թեև ոլորտը շարունակում է պահպանել կարևոր դեր տնտեսության կառուցվածքում, դրա արդյունավետության մակարդակը դեռևս մնում է համեմատաբար ցածր՝

արդյունաբերական արտադրության մեջ առկա տեխնոլոգիական, ներդրումային և արտադրողականության սահմանափակումների պատճառով:

Շինարարության ոլորտում արդյունավետության ցուցանիշները ցուցադրել են համեմատաբար կայուն մակարդակ՝ գտնվելով միջինից բարձր դիրքում: Սա խոսում է ոլորտում ռեսուրսների համեմատաբար արդյունավետ օգտագործման մասին, սակայն շինարարությունը հիմնականում մնում է ներքին շուկային ուղղված ոլորտ և սահմանափակ չափով է նպաստում արտահանելի ներուժի ձևավորմանը:

Առևտրի և ծառայությունների ոլորտը դարձել է ՀՀ տնտեսության գլխավոր հենասյուներից մեկը: 2018 թվականին ծառայությունների ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 52.6%, իսկ 2024 թվականին՝ 62.0%: Այս աճը վկայում է տնտեսության սերվիսացման խորացման մասին: Մի կողմից, դա արտահայտում է շուկայի դինամիկ զարգացումը, սակայն մյուս կողմից՝ բարձրացնում է տնտեսության ոչ արտահանելի հատվածներից կախվածության հարցը:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ 2024 թվականին տնտեսության զգալի մասը՝ շինարարությունը, առևտուրը և ծառայությունները միասին, ձևավորվել է ոչ արտահանելի ոլորտներում: Այս փաստը կարևոր հետևանքներ ունի երկրի տնտեսական անվտանգության և արտաքին շուկաներում ինտեգրման հնարավորությունների տեսանկյունից: Արտահանելի ոլորտների՝ գյուղատնտեսության և արդյունաբերության համեմատաբար ցածր տեսակարար կշիռը սահմանափակում է արտարժույթային ներհոսքը, արտադրության մասշտաբների ընդլայնումը և տնտեսությունը դարձնում է առավել կախված ներքին պահանջարկից:

Ելնելով վերլուծության արդյունքներից՝ կարելի է եզրակացնել, որ տնտեսության կառուցվածքային բարեփոխումների և արդյունավետության բարձրացման քաղաքականությունը պետք է կենտրոնացվի հատկապես այն ոլորտների զարգացման վրա, որոնք միաժամանակ ունեն արտահանման ներուժ և բարձր արդյունավետության պոտենցիալ: Այս պարագայում առավել նպատակահարմար է դիտարկել համախառն ավելացված արժեքի արտադրության ցուցանիշները՝ որպես ուղղորդող գործիք ոչ միայն ներկա կառուցվածքի գնահատման, այլ նաև ապագա ռազմավարական ուղղությունների ընտրության համար:

Եկամուտների ձևավորման հաշվի վերլուծությունն ընձեռում է հնարավորություն գնահատելու ոչ միայն ստեղծված համախառն ավելացված արժեքի ծավալները, այլև դրա ներքին բաշխման տրամաբանությունը՝ ըստ աշխատանքի, հարկերի և շահույթի: Այս մոտեցումը տնտեսության խորքային գնահատման կարևորագույն տարրերից է, քանի որ այն ուղղակիորեն կապված է ռեսուրսների տեղաբաշխման, արտադրության արդյունավետության և սոցիալական արդարության խնդիրների հետ:

Հայաստանի տնտեսությունում գերիշխող դեր են խաղում համախառն շահույթը և խառը եկամուտը՝ ի տարբերություն աշխատավարձի բաղադրիչի: Տնտեսության մի շարք ոլորտներում վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության բաժինը համախառն ավելացված արժեքի մեջ գտնվել է համեմատաբար ցածր մակարդակում, հատկապես գյուղատնտեսության և արդյունաբերության դեպքում: Միևնույն ժամանակ, առևտրի և ծառայությունների ոլորտում, թեև աշխատատարությունը համեմատաբար բարձր է, շահութաբերության աստիճանը նույնպես նշանակալի է:

Այս հարաբերակցությունները վկայում են եկամուտների բաշխման անհավասարակշիռ կառուցվածքի մասին։

Շահութաբերության առավել բարձր մակարդակ արձանագրվել է գյուղատնտեսության, ֆինանսական և անշարժ գույքի ոլորտներում, ինչը մասամբ բացատրվում է արտադրության ցածր ծախսատարությամբ, հարկատարության փոքր չափաբաժնով և աշխատուժի նվազ ներգրավմամբ։ Դրա հակադրությամբ՝ պետական կառավարման, կրթության և առողջապահության ոլորտներում շահութաբերության ցուցանիշները շատ ցածր են կամ գրեթե զրոյական, իսկ աշխատատարությունը՝ բարձր։ Այս իրավիճակը վկայում է հանրային ոլորտի տնտեսապես ոչ շահութաբեր, սակայն սոցիալապես կենսական նշանակության բնույթի մասին։

Եկամուտների ձևավորման վերլուծությունը բացահայտում է, որ համախառն ավելացված արժեքի կառուցվածքը զգալիորեն փոփոխվել է վերջին երկու տասնամյակների ընթացքում։ Եթե 2001 թվականին տնտեսության զուտ շահույթի և խառը եկամուտների բաժինը կազմում էր 32.6%, ապա 2021 թվականին այն հասել է 46.0%-ի։ Միևնույն ժամանակ, վարձու աշխատողների աշխատանքի վարձատրության բաժինը նվազել է 41.8%-ից մինչև 38.4%, իսկ արտադրության այլ զուտ հարկերի բաժինը նվազել է ավելի քան 9 տոկոսային կետով։ Այս միտումները վկայում են աշխատուժի հարաբերական դերի թուլացման, պետության եկամտային գործառույթների սահմանափակման և կապիտալի դերակատարության ուժեղացման մասին։

Նշված իրավիճակը արդիականացնում է եկամուտների վերաբաշխման մեխանիզմների վերանայման և արդիականացման անհրաժեշտությունը։ Պետությունը, որպես կարգավորող և միջնորդող օղակ աշխատանքի, կապիտալի և հանրային շահերի միջև, պետք է կարողանա հավասարակշռել շահերի բախումը եկամուտների ձևավորման ընթացքում՝ միաժամանակ ապահովելով տնտեսական աճ, սոցիալական կայունություն և արդարություն։

Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի կառուցվածքի և արտադրության արդյունավետության վերլուծությունը 2012–2024 թվականների կտրվածքով վկայում է տնտեսության ոլորտային անհամաչափ զարգացումներից, կառուցվածքային տեղաշարժերից և արդյունավետության բևեռվածությունից։

Տնտեսության կառուցվածքի մեջ համեմատաբար կայուն պահպանվել է այն օրինաչափությունը, որ ՀՆԱ-ի շուրջ 90%-ը ձևավորվում է ավելացված արժեքի հաշվին, իսկ մնացած շուրջ 10%-ը՝ արտադրանքի հարկերի հաշվին, որոնք ներկայացնում են պետական բյուջեի հիմնական հարկաբազան։ Այս համամասնությունը վկայում է, որ տնտեսական կառուցվածքը պայմանավորված է ոչ միայն արտադրական ծավալներով, այլ նաև հարկաբյուջետային քաղաքականությամբ։

Հատուկ ուշադրության է արժանի արտադրության արդյունավետության ցուցանիշը, որը հաշվարկվել է որպես համախառն ավելացված արժեքի և թողարկման հարաբերակցություն։ Վերլուծության արդյունքում արձանագրվել է, որ առավել արդյունավետ ոլորտը եղել է առևտուրն ու ծառայությունները՝ շուրջ 73% արդյունավետությամբ, մինչդեռ արդյունաբերության ոլորտում ցուցանիշը տատանվել է 49.8–50.7% միջակայքում՝ մնալով ամենացածր մակարդակում։ Գյուղատնտեսության ոլորտը գրանցել է կայուն միջին արդյունավետություն՝ շուրջ 64.6%, իսկ

շինարարության արդյունավետությունը կազմել է մոտ 54.7%: Տնտեսության ընդհանուր համախառն արդյունավետությունը կազմել է շուրջ 64.1%:

Համախառն ավելացված արժեքի աճի տեմպերն ըստ ոլորտների նույնպես տարբեր են եղել: 2012–2024 թվականներին առևտրի և ծառայությունների ոլորտի աճը կազմել է 292.9%, արդյունաբերության աճը՝ 326.3%, գյուղատնտեսության աճը՝ 151.0%, իսկ շինարարության աճը՝ 136.6%: Այս ցուցանիշները վկայում են, որ դիտարկվող ժամանակահատվածում առավել արագ աճ են արձանագրել արդյունաբերությունը և առևտրի ու ծառայությունների ոլորտը, մինչդեռ գյուղատնտեսությունն ու շինարարությունը պահպանել են համեմատաբար ավելի դանդաղ աճի միտում:

Տնտեսության կառուցվածքում արձանագրվել են հետևյալ էական փոփոխությունները: Գյուղատնտեսության, անտառային տնտեսության և ձկնորսության ոլորտի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում 2018 թվականին կազմել է 13.9%, իսկ 2024 թվականին նվազել է մինչև 7.8%: Արդյունաբերության, ներառյալ շինարարության, տեսակարար կշիռը 2018 թվականին կազմել է 24.8%, իսկ 2024 թվականին՝ 22.9%: Ծառայությունների ոլորտի մասնաբաժինը նույն ժամանակահատվածում աճել է 52.6%-ից մինչև 62.0%: Այս փոփոխությունները ցույց են տալիս, որ ՀՀ տնտեսության կառուցվածքում ծառայությունների ոլորտը շարունակում է ընդլայնել իր գերակշիռ դիրքը:

Մեկ այլ կարևոր հանգամանք է այն, որ 2024 թվականին տնտեսության շուրջ 70%-ից ավելին ձևավորվել է ոչ արտահանելի ոլորտներում՝ ներառյալ շինարարությունը, առևտուրը և ծառայությունները: Արտահանելի ոլորտների տեսակարար կշիռը՝ գյուղատնտեսության և արդյունաբերության մասով, շարունակում է մնալ համեմատաբար ցածր մակարդակում: Այս կառուցվածքը սահմանափակում է արտաքին եկամուտների ձևավորման հնարավորությունը, նվազեցնում արտարժութային մուտքերի կայունությունը և տնտեսությունը դարձնում է առավել կախված ներքին շուկայի պայմաններից:

Տնտեսության ոլորտային արդյունավետության համադրումը վկայում է, որ առավել մեծ արդյունաբերական և արտաքին տնտեսական ներուժ ունեցող ճյուղերում արդյունավետության մակարդակն առայժմ չի համապատասխանում ակնկալվող չափանիշներին: Հետևաբար, տնտեսական քաղաքականությունը պետք է նպատակաուղղված լինի կառուցվածքային վերափոխումների, արտահանելի ոլորտների ընդլայնման, տեխնոլոգիական արդիականացման և ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ: Այս մոտեցումները հնարավորություն կտան բարձրացնել տնտեսության համախառն արդյունավետությունը, ամրապնդել արտաքին տնտեսական կայունությունն ու խթանել տնտեսական աճի ներուժը:

ՀՀ տնտեսության կառուցվածքային դինամիկան 2012–2024 թվականների ընթացքում ունեցել է որոշակի դրական միտումներ առանձին ոլորտներում, սակայն համատարած առումով պահպանվել են կառուցվածքային սահմանափակումներ: Հետևաբար, երկարաժամկետ ռազմավարական զարգացման ծրագրերում անհրաժեշտ է կենտրոնանալ բարձր արդյունավետություն ունեցող և արտահանման ուղղվածություն ունեցող ճյուղերի խթանման վրա, ինչը կնպաստի տնտեսության մրցունակության, բարդության և կայունության աստիճանի բարձրացմանը:

• Վերլուծության արդյունքում հաստատվել է, որ ՀՀ-ում 2000-2023 թթ. ժամանակահատվածում վարձու աշխատողների աշխատանքի մասնակի և

ամբողջական հավելյալ արդյունքի նորման զգալիորեն աճել է: Մասնավորապես՝ արտադրության և ներմուծման հարկերի հարաբերակցությունը վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությանը (մասնակի նորմա) աճել է 10.9 տոկոսային կետով՝ 2000 թ.-ի 26.6%-ից հասնելով 2023 թ.-ի 37.5%-ի, իսկ ամբողջական նորման (ներառյալ համախառն շահույթը և հիմնական կապիտալի սպառումը) աճել է մոտ 65.3 տոկոսային կետով՝ հասնելով 201.0%-ի:

Հաստատվել է, որ կապիտալի տերերի բաժինը ՀՆԱ-ում՝ համախառն շահույթի և խառը եկամուտների ձևով, 2000 թ.-ի 46.6%-ից աճել է մինչև 54.4%, մինչդեռ վարձու աշխատողների աշխատանքի վարձատրությունը նվազել է համապատասխանաբար՝ 42.7%-ից 33.3%: Արդյունքում ձևավորվել է եկամուտների բաշխման կառուցվածքային փոփոխություն հօգուտ կապիտալի:

Հավելյալ արդյունքի նորմայի բարձրացման միտումը, ըստ կատարված վերլուծության, ազդում է ոչ միայն տնտեսական կառուցվածքի փոփոխության, այլև սոցիալ-տնտեսական կայունության և մարդու ազատության տնտեսական հիմքերի վրա: Նշված հարաբերակցությունների վերափոխումն ունի վճռորոշ նշանակություն միջին խավի ձևավորման, բնակչության եկամուտների բաշխման արդարության և սոցիալական համերաշխության պահպանման տեսանկյունից:

Հայաստանի Հանրապետությունը գտնվում է վարձու աշխատանքի շահագործման բարձր մակարդակի մեջ, ինչը պայմանավորված է կապիտալի գերիշխմամբ և հանրային բարիքների բաշխման կառուցվածքային անհամաչափությամբ: Տվյալ արդյունքները կարևոր են տնտեսական քաղաքականության մշակման, եկամուտների արդար բաշխման մոդելների ձևավորման և տնտեսական անվտանգության ապահովման տեսակետից:

Բնակչության եկամուտների բաշխման հիմնախնդիրները և պետական կարգավորման գործիքակազմը շարունակում են մնալ արդիական և կենսական նշանակության հարցեր ինչպես զարգացած, այնպես էլ զարգացող երկրների համար: Աշխարհաքաղաքական բարդ իրավիճակներում, տնտեսական անհավասարությունը և աղքատության բարձր մակարդակը հանգեցնում են ոչ միայն սոցիալական լարվածության, այլև ազգային անվտանգության սպառնալիքի:

Ժամանակակից տնտեսագիտությունն եկամուտների բաշխումը դիտարկում է ոչ միայն գաղափարական, այլև կիրառական համատեքստում՝ փորձելով մշակել այնպիսի գործիքակազմեր, որոնք կկարողանան մեղմել կամ հաղթահարել եկամտային բևեռացվածության հետևանքները:

Տարբեր երկրներում ընդունված է օգտագործել կենսապահովման նվազագույն չափը, որն արտահայտվում է սպառողական զամբյուղով: Այդ զամբյուղը ներառում է ապրանքների և ծառայությունների նվազագույն անհրաժեշտ համալիր, որի արժեքը փոփոխվում է ժամանակի ընթացքում՝ արտացոլելով տնտեսական պայմանների, գնաճի և սպառողական կարիքների փոփոխությունները: Կենսամակարդակի գնահատման այս չափորոշիչը թույլ է տալիս տարբերակել աղքատության մեջ հայտնված բնակչությունը և մշակել համապատասխան սոցիալական քաղաքականություն:

Անհավասարության հիմնախնդիրները խիստ տարբեր են նաև սոցիալ-ժողովրդագրական հատկանիշներով: Աղքատության ֆեմինիզացիան, երիտասարդ ընտանիքների եկամտային դժվարությունները, տարեցների սոցիալական

մեկուսացումը և քաղաքային ու գյուղական բնակչության եկամուտների տարբերությունները ձևավորում են բազմաշերտ պատկեր։ Հատկապես մեծ ազդեցություն ունի ժողովրդագրական կառուցվածքը այն երկրներում (այդպիսին է նաև Հայաստանի Հանրապետությունը), որտեղ բարձր է ծերացող բնակչության տեսակարար կշիռը, եկամուտների անհավասարության խնդիրը ստանում է լրացուցիչ ծանրաբեռնվածություն։

Տվյալների վերլուծության առումով մեծ նշանակություն ունի Համաշխարհային անհավասարության տվյալների բազան (WID.world), որը թույլ է տալիս համադրելի տեսքով գնահատել եկամտի և հարստության բաշխումը՝ ներառելով ինչպես հարկային տվյալներ, այնպես էլ ֆինանսական վարկանիշներ։ Այս տվյալները բացահայտում են, որ եկամուտների բաշխման վերին խմբերում կենտրոնացումն աճել է՝ միաժամանակ խթանելով սոցիալական անհավասարություն։

Տնտեսական քաղաքականության տեսանկյունից՝ եկամուտների արդար բաշխման ապահովման առանցքային գործիքներից են հարկային քաղաքականությունը, պետական տրանսֆերտները, նպաստների տրամադրումը, գների և աշխատավարձերի նվազագույն շեմերի սահմանումը։ Այս միջոցառումները նպատակ ունեն մեղմել շուկայի կողմից պայմանավորված եկամտային անհավասարությունները՝ առանց խաթարելու տնտեսական դինամիկան։

Համաշխարհային փորձն ապացուցում է, որ պետությունները, որոնցում առավել համաչափ են օգտագործվում եկամուտների վերաբաշխման գործիքակազմերը, կարողանում են ապահովել կայուն հասարակություն, նվազեցնել աղքատության մակարդակը և խթանել միջին խավի ձևավորումը։ ԱՄՆ-ում և Շվեյցարիայում տարբեր մոդելների կիրառումը ցույց է տալիս, որ հնարավոր է համատեղել տնտեսական արդյունավետությունը և սոցիալական արդարությունը։ ԱՄՆ-ում հիմնականում պետական բյուջեի հաշվին իրականացվող սոցիալական պաշտպանվածությունը ուղղված է առավել խոցելի խմբերին՝ երեխաներին, ծերերին, գործազուրկներին։ Շվեյցարիայում, իր հերթին, գործադրվում են ակտիվ զբաղվածության խթանման միջոցառումներ՝ ներառյալ վերապատրաստման ծրագրերը և պաշտպանված աշխատատեղերի ստեղծումը։ Այս քաղաքականությունների շնորհիվ հնարավոր է նվազեցնել գործազրկությունն ու աղքատությունը՝ միաժամանակ բարձրացնելով աշխատանքի արտադրողականությունը։

Հայաստանի պարագայում նման քաղաքականությունների տեղայնացումը պահանջում է համակողմանի մոտեցում՝ հաշվի առնելով երկրի սոցիալ-տնտեսական կառուցվածքը, ժողովրդագրական իրողությունները և պետական բյուջեի հնարավորությունները։ Առաջնահերթ են համարվում զբաղվածության խթանումը, աղքատության նվազեցմանն ուղղված նպաստների նպատակային բաշխումը, երիտասարդ ընտանիքների բնակարանային խնդիրների լուծումը, տարեցների և հաշմանդամների համար հատուկ ծրագրերի մշակումն ու իրականացումը։

Եկամուտների բաշխման արդարությունն ու սոցիալական պաշտպանվածության համակարգի կայունությունը պայմանավորում են հասարակության ներդաշնակ զարգացումը։ Արդյունավետ պետական քաղաքականությունը պետք է ուղղված լինի ոչ միայն վերաբաշխման կառուցակարգերի կատարելագործմանը, այլև երկարաժամկետ ներդրումների խթանմանը, որոնք կնպաստեն մարդկային կապիտալի զարգացմանը՝ կրթության, առողջապահության և զբաղվածության ոլորտներում։ Այս բոլոր քայլերը

ձևավորում են կայուն հասարակության հիմքը, որտեղ տնտեսական աճը վերածվում է սոցիալական առաջընթացի։

Հայաստանի Հանրապետությունում միջին խավի ձևավորման հիմնախնդիրների համապարփակ ուսումնասիրությունը բացահայտում է սոցիալ-տնտեսական անհավասարությունների խորքը, ինչպես նաև ազգային տնտեսության կառուցվածքի և եկամուտների բաշխման մեջ առկա հիմնական մարտահրավերները։ Հետազոտության արդյունքները վկայում են, որ վերջին երեք տասնամյակներում, չնայած որոշ առաջընթացին, Հայաստանի բնակչության միջին խավը շարունակում է կազմել համեմատաբար փոքր հատված՝ 2024 թվականին կազմելով բնակչության ընդհանուր եկամուտների շուրջ 28.0 տոկոսը։ Այս հանգամանքը պայմանավորված է ոչ միայն մակրոտնտեսական անհավասարություններով, այլև սոցիալական քաղաքականության թերություններով։

Միջին խավի կայացումը դիտվում է ոչ միայն որպես տնտեսական վերելքի ցուցիչ, այլև որպես քաղաքական կայունության, մշակութային ինքնության և սոցիալական արդարության ապահովման անհրաժեշտ պայման։ Միջին խավի ձևավորումը հնարավորություն է տալիս բնակչության լայն զանգվածների ներգրավվածությունը տնտեսական և հանրային կյանքում՝ նպաստելով սոցիալական համերաշխության, ինստիտուցիոնալ կայունության և քաղաքացիական հասարակության զարգացմանը։

Գործող սոցիալական քաղաքականությունը առաջնահերթություն է տալիս աղքատության նվազեցմանը, սակայն բավարար արդյունք չի ապահովում միջին խավի ձևավորման ուղղությամբ։ Առաջարկվում է ձևավորել նոր տնտեսաքաղաքական մոդել, որի առանցքում կդրվի ոչ թե աղքատության սահմանը, այլ միջին խավի եկամուտների ստորին և վերին շեմերի սահմանումը։ Այս մոդելը կծառայի որպես նոր հիմք հարկային և սոցիալական քաղաքականության մշակման համար՝ ուղղված եկամուտների արդար վերաբաշխմանը և միջին խավի կայունացմանը։

Վերլուծությունները հիմնված են ՀՀ վիճակագրական կոմիտեի դեցիլային և քվինտիլային բաշխման վերամշակված տվյալների վրա։ Այս մեթոդաբանական մոտեցմամբ հնարավոր է դարձել գնահատել բնակչության աղքատ, միջին և հարուստ խավերի տեսակարար կշիռները։ Տարբեր ժամանակահատվածների համադրությունը ցույց է տալիս, որ միջին խավի եկամուտների բաժինը 1996 թվականին կազմել է 22.7 տոկոս, իսկ 2024 թվականին՝ 28.0 տոկոս։ Չնայած դրական միտումներին, միջին խավի տեսակարար կշիռը շարունակում է զգալիորեն զիջել հարուստ խավին, որի եկամուտների բաժինը 2024 թվականին կազմել է 57.9 տոկոս։

Ուսումնասիրության կարևոր դիտարկումներից է այն հանգամանքը, որ միջին խավի աճը հիմնականում պայմանավորված չէ աղքատության հաղթահարմամբ, այլ՝ հարուստների եկամուտների որոշ նվազումով, ինչը վկայում է եկամուտների վերաբաշխման քաղաքականության սահմանափակումների մասին։ Այս փաստը ցույց է տալիս, որ առկա համակարգը չունի բավարար ներուժ՝ համակողմանի սոցիալական հավասարակշռություն ապահովելու համար։

Հեղինակները առաջարկում են մի շարք առանցքային քայլեր։ Առաջինը՝ միջին խավի եկամուտների շեմերի հաստատումն է, որի հիման վրա պետք է ձևավորվի նոր հարկային սանդղակ։ Երկրորդը՝ միջին խավի ձևավորումը պետք է դիտվի որպես պետական ռազմավարության առանցքային նպատակ՝ ներառվելով ազգային

ռազմավարական փաստաթղթերում և տարեկան պետական ծրագրերում։ Երրորդը՝ վիճակագրական մարմինները պետք է պարբերաբար հաշվարկեն և հրապարակեն աղքատ, միջին և հարուստ խավերի եկամուտների և ծախսերի վերաբերյալ տվյալներ՝ նպաստելով ավելի թափանցիկ և վերահսկելի քաղաքականության մշակմանը։ Չորրորդը՝ քաղաքական ուժերը պետք է հանդես գան միջին խավի ձևավորման վերաբերյալ հստակ դիրքորոշմամբ։ Եվ հինգերորդը՝ պետք է սահմանել կոնկրետ նպատակ՝ միջին խավի տեսակարար կշիռը տարեկան ավելացնել 1–2 տոկոսային կետով՝ կիրառելով արդյունավետ միջոցառումների համալիր։

Այս առաջարկությունները կարող են հիմք ծառայել սոցիալ-տնտեսական արդարության, եկամուտների արդար բաշխման և կայուն հասարակության ձևավորման քաղաքականության գործում։ Միջին խավի ձևավորումն այս համատեքստում դիտարկվում է ոչ թե միայն որպես համաշխարհային միտումներին համահունչ արձագանք, այլ՝ որպես խորքային ազգային անհրաժեշտություն, որն ազդում է Հայաստանի զարգացման ընդհանուր ուղղության և սոցիալական կառուցվածքի կայունության վրա։

Ամփոփելով՝ ներկայացված ուսումնասիրությունը բացահայտում է միջին խավի ձևավորման խնդիրները և առաջարկում է կառուցվածքային և սոցիալ-տնտեսական լուծումներ, որոնք միտված են տնտեսական քաղաքականության արդիականացմանը, սոցիալական համերաշխության ամրապնդմանը և հանրային վստահության բարձրացմանը։ Այս վերլուծությունը ծառայում է որպես կարևոր վերլուծական և ռազմավարական հիմք՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական և սոցիալական բարեփոխումների ուղղությունը հստակեցնելու և առաջ մղելու համար։

• Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի արդյունավետության բարձրացումը սերտորեն կապված է լոգիստիկ համակարգերի արդիականացման, տարածաշրջանային ինտեգրման խորացման և արտահանման կառուցվածքի դիվերսիֆիկացման հետ։ 2023թ. LPI ցուցանիշների վերլուծությունը վկայում է, որ հետխորհրդային երկրները, բացառությամբ Բալթյան երկրների, դեռևս զգալիորեն զիջում են համաշխարհային առաջատարներին։ ՆԽՄ 13 երկրների միջին LPI միավորը կազմել է 2.8՝ ցածր լինելով համաշխարհային միջինից՝ 3.0, իսկ Հարավային Կովկասի երկրների միջին ցուցանիշը կազմել է 2.6, ինչը մատնանշում է ենթակառուցվածքային, մաքսային և թվայնացման խնդիրների պահպանվող ազդեցությունը։

Հայաստանի դիրքը լոգիստիկ արդյունավետության տեսանկյունից շարունակում է մնալ խոցելի. երկրի ընդհանուր LPI միավորը կազմել է 2.5, մաքսային ծառայություններինը՝ 2.5, ենթակառուցվածքներինը՝ 2.6, միջազգային առաքումներինը՝ 2.2, իսկ բեռների հետևման և հետագծման ցուցանիշը՝ 2.3։ Այս տվյալները վկայում են, որ Հայաստանի համար առաջնային են մաքսային ընթացակարգերի թվայնացումը, բեռների վերահսկման համակարգերի զարգացումը, միջմոդալ տրանսպորտային կապերի բարելավումը և տարածաշրջանային տրանսպորտային միջանցքներին առավել ակտիվ ինտեգրումը։

Արտաքին առևտրի կառուցվածքային վերլուծությունը ցույց է տալիս, որ տարածաշրջանում առկա են տնտեսական մասնագիտացման և մրցունակության խոր անհամաչափություններ։ Ռուսաստանը և Ադրբեջանը ունեն դրական համեմատական առավելություններ՝ համապատասխանաբար 27.03% և 50.45%, ինչը հիմնականում

պայմանավորված է հումքային և էներգակիրների արտահանմամբ: Մինչդեռ Հայաստանը, Վրաստանը և Թուրքիան ունեն բացասական ցուցանիշներ. Հայաստանի ՀԱԳ-ը կազմել է -14.61%, Վրաստանինը՝ -12.36%, իսկ Թուրքիայինը՝ -2.08%: Սա ցույց է տալիս, որ Հայաստանը շարունակում է մնալ ներմուծումից կախված և արտահանման թույլ մասնագիտացում ունեցող տնտեսություն:

Հայաստանի արտաքին առևտրային ներուժի գնահատումը գրավիտացիոն մոդելի կիրառմամբ ցույց է տալիս, որ ամենամեծ չօգտագործված պոտենցիալը ձևավորվում է Թուրքիայի հետ՝ պայմանավորված թե՛ Թուրքիայի խոշոր տնտեսական ծավալով, թե՛ աշխարհագրական մոտիկությամբ: Սակայն քաղաքական և պատմական սահմանափակումների պատճառով այդ ներուժը ներկայումս ամբողջությամբ չի իրացվում: Միաժամանակ, կարևոր են նաև Ռուսաստանի, Իրանի, Վրաստանի և Ադրբեջանի հետ առևտրային կապերի ընդլայնման հնարավորությունները՝ հաշվի առնելով Հայաստանի աշխարհագրական դիրքը և տարածաշրջանային փոխկապակցվածության անհրաժեշտությունը:

Ընդհանուր առմամբ, կարելի է եզրակացնել, որ ՀՀ արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման համար անհրաժեշտ է իրականացնել երեք հիմնական ուղղություն՝ առաջին՝ լոգիստիկ ենթակառուցվածքների և մաքսային համակարգերի արդիականացում, երկրորդ՝ արտահանման ապրանքային և աշխարհագրական դիվերսիֆիկացում, երրորդ՝ տարածաշրջանային տնտեսական կապերի խորացում: Այս միջոցառումները կարող են նվազեցնել ներմուծման կախվածությունը, բարձրացնել արտահանման մրցունակությունը և ամրապնդել Հայաստանի արտաքին տնտեսական անվտանգությունը երկարաժամկետ հեռանկարում:

Ատենախոսության հիմնական դրույթները ներկայացված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Մ. Ա. Մարկոսյան, Բնակչության դրամական եկամուտների ձևավորման և բաշխման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում, Երևան, «Գիտություն» հրատ., 2008, 326 էջ:
2. A. Kh. Markosyan, E. N. Matevosyan, M. A. Markosyan, Sh. A. Arakelyan, The Concept of Economic Freedom and the Methodology Used to Calculate the Economic Freedom Index, Bulletin of High Technology, 2023, N 1 (25), pp. 17–30. https://doi.org/10.56243/18294898-2023.1-17
3. A. Kh. Markosyan, V. G. Khachaturyan, A. K. Harutyunyan, M. A. Markosyan, V. G. Petrosyan, The System of Global Indicators of Science and Technology and the Trends of Declining Effectiveness of Applied Research in the Republic of Armenia, Bulletin of High Technology, 2023, N 1 (25), pp. 31–47. https://doi.org/10.56243/18294898-2023.1-31
4. A. Kh. Markosyan, V. G. Khachaturyan, H. V. Tokmajyan, A. K. Harutyunyan, M. A. Markosyan, The Primary Issues with Financing and Management of Scientific and Scientific-Technical Activities in the Republic of Armenia, Bulletin of High Technology, 2023, N 2 (26), pp. 3–17. https://doi.org/10.56243/18294898-2023.2-3

5. M. A. Markosyan, Efficiency of Foreign Trade of the Republic of Armenia, Bulletin of High Technology, 2023, N 2 (26), pp. 37–47. https://doi.org/10.56243/18294898-2023.2-37
6. M. A. Markosyan, Fundamental Problems of Population Income Distribution and State Regulation Instruments, Bulletin of High Technology, 2023, N 3 (27), pp. 49–61. https://doi.org/10.56243/18294898-2023.3-49
7. M. A. Markosyan, S. H. Tokmajyan, Zh. M. Mirzoyan, G. A. Ivanyan, The Problems of Centralization of Population Monetary Income and Poverty in Armenia, Bulletin of High Technology, 2023, N 3 (27), pp. 62–75. https://doi.org/10.56243/18294898-2023.3-62
8. A. Markosyan, M. Markosyan, Some Issues of Middle-Class Formation in the Republic of Armenia, Messenger of ASUE, 2023, N 3 (75), pp. 35–49. https://doi.org/10.52174/1829-0280_2023.3-35
9. A. Markosyan, E. Matevosyan, M. Markosyan, The Global and Regional Debt Crisis, Scientific Artsakh, 2023, N 3 (18), pp. 143–156. https://doi.org/10.52063/25792652-2023.3.18-143
10. A. Markosyan, E. Matevosyan, M. Markosyan, Efficiency of the Use of the External Public Debt of the Republic of Armenia, Public Administration Scientific Journal, 2023, N 2 (23), pp. 36–48. https://doi.org/10.55490/18290167-2023.2-36
11. M. A. Markosyan, The Global Experience and Trends of Poverty Overcoming, Bulletin of High Technology, 2023, N 4 (28), pp. 69–81. https://doi.org/10.56243/18294898-2023.4-69
12. R. Harutyunyan, K. Nersisyan, S. Tokmajyan, M. Markosyan, G. Ivanyan, Motivation for Salary Increase for Teachers Depending on the Quality of Teaching and Research Results, System Safety: Human–Technical Facility–Environment, 2023, Vol. 5, N 1, pp. 182–188. https://doi.org/10.2478/czoto-2023-0020
13. A. Kh. Markosyan, E. N. Matevosyan, M. A. Markosyan, G. Martirosyan, Transition from Socialism to a Market Economy: Assessment of Economic Consequences in the Republic of Armenia, Bulletin of High Technology, 2024, N 1 (29), pp. 25–39. https://doi.org/10.56243/18294898-2024.1-25
14. Ա. Մարկոսյան, Է. Մաթևոսյան, Մ. Մարկոսյան, Ազգային և տնտեսական անվտանգության ապահովումը ռազմավարական պլանավորման համատեքստում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2024, N 1, էջ 87–101: https://doi.org/10.55490/18290167-2024.1-87
15. Ա. Մարկոսյան, Է. Մաթևոսյան, Մ. Մարկոսյան, Տնտեսական աճի քաղաքականությունները և արդյունքները Հայաստանի Հանրապետությունում, «Հանրային կառավարում» գիտական հանդես, 2024, հատուկ թողարկում, էջ 169–184: https://doi.org/10.55490/18290167-2024.sp-169
16. Ա. Մարկոսյան, Է. Մաթևոսյան, Մ. Մարկոսյան, Երկրի տնտեսակարգի և եկամտի բաշխման փոխառնչությունները, «Գիտական Արցախ», 2024, N 1 (20), էջ 174–186: https://doi.org/10.52063/25792652-2024.1.20-174
17. A. Markosyan, E. Matevosyan, M. Markosyan, G. Martirosyan, G. Hayriyan, Economic Systems: Growth and Distribution, Bulletin of High Technology, 2024, N 2 (30), pp. 89–108. https://doi.org/10.56243/18294898-2024.2-89

18. M. A. Markosyan, Export of Electricity and Regional Cooperation Issues, Bulletin of High Technology, 2025, N 1 (33), pp. 71–84. https://doi.org/10.56243/18294898-2025.1-71
19. M. A. Markosyan, Capitalization of National Wealth: Key Challenges and Development Opportunities, Bulletin of High Technology, 2025, N 2 (34), pp. 63–88. https://doi.org/10.56243/18294898-2025.2-63
20. M. Markosyan, A. Markosyan, E. Matevosyan, V. Khachatryan, The Logistics Divide in Post-Soviet Space: Infrastructure Gaps, Performance Patterns, and Regional Integration Prospects, Journal of Logistics, Informatics and Service Science, 2025, Vol. 12, N 2, pp. 65–76. https://doi.org/10.33168/JLISS.2025.0204
21. M. A. Markosyan, J. Cen, Comparative Analysis of Armenia and Georgia's Export Structure and Competitiveness (on the Example of the Main Commodity Groups), Bulletin of High Technology, 2025, N 4 (36), pp. 69–88. https://doi.org/10.56243/18294898-2025.4-69
22. A. Kh. Markosyan, E. N. Matevosyan, M. A. Markosyan, Some Approaches to the Methodology and Assessment of Economic Security, in: E. G. Popkova (ed.), Technological Horizons of Decarbonization Based on Environmental Innovations, Advances in Science, Technology & Innovation, Springer, Cham, 2025. https://doi.org/10.1007/978-3-031-82210-0_65
23. A. Markosyan, E. Matevosyan, M. Markosyan, Results of the Economic Security Assessment of the South Caucasus Republics, Bulletin of the Georgian National Academy of Sciences, 2025, Vol. 19, N 1, pp. 168–175
24. M. Markosyan, E. Matevosyan, A. Markosyan, The Dynamics, Challenges, and Strategic Opportunities of Solar Energy Development in the South Caucasus Countries, Journal of Environmental Accounting and Management, 2026, Vol. 14, N 3, pp. 459–472. https://doi.org/10.5890/JEAM.2026.09.006
25. A. Kh. Markosyan, E. N. Matevosyan, J. Cen, M. A. Markosyan, Electricity Tariff Dynamics and the Economic Determinants of Regional Energy Cooperation, Bulletin of High Technology, 2026, N 1 (37), pp. 73–97. https://doi.org/10.56243/18294898-2026.1-73
26. M. Markosyan, E. Matevosyan, A. Grigoryan, A. Markosyan, Economic Assessment of Food Security and the Cost of a Healthy Diet in the South Caucasus (2010–2024), Agricultural Economics Review, 2026, Vol. 27, N 1, pp. 99–108. https://doi.org/10.66843/jlsn2555

МЕРУЖАН МАРКОСЯН АШОТОВИЧ
ПРИОРИТЕТЫ СОЦИАЛЬНО-ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

Диссертация на соискание ученой степени доктора экономических наук по специальности 08.00.02 - “Экономика и управление народным хозяйством и его отраслями”.

Защита диссертации состоится 2 октября 2026 года в 14:00 на заседании Специализированного совета 014 Комитета по высшему образованию и науке Республики Армения, действующего в Армянском государственном экономическом университете, по адресу: 0025, РА, г. Ереван, ул. Налбандяна 128.

В условиях современной глобальной экономики геополитическая напряжённость, финансово-экономические кризисы, энергетические и продовольственные риски оказывают существенное влияние на социально-экономическое развитие стран. Эти вызовы имеют особое значение для малых открытых экономик, к числу которых относится Республика Армения, где возникает необходимость уточнения приоритетов социально-экономического развития, эффективного распределения ограниченных ресурсов и обеспечения устойчивого и инклюзивного экономического роста.

Структурные особенности экономики Армении, внешнеэкономическая зависимость, логистические ограничения, структурные диспропорции внешней торговли, неравномерное распределение доходов и проблемы инвестиционной среды обусловливают необходимость разработки новых подходов к формированию и реализации социально-экономической политики. В этом контексте научное обоснование приоритетов развития, комплексная оценка социально-экономических процессов и разработка эффективных механизмов управления представляют собой важные научные и прикладные задачи.

Целью диссертационного исследования является оценка структурной эффективности экономики, уровня экономической безопасности, особенностей распределения доходов и тенденций развития внешней торговли на основе комплексного исследования проблем социально-экономического развития Республики Армения, а также разработка приоритетных направлений развития и практических мер по их реализации.

В ходе исследования получен ряд научных результатов, обладающих элементами научной новизны:

- Разработана интегрированная теоретико-методологическая концепция комплексной оценки социально-экономического развития Республики Армения, в рамках которой в единой системе оценки объединены макроэкономические, структурные, внешнеэкономические показатели, а также показатели экономической безопасности и социального распределения. На основе данной концепции сформирована модель комплексной оценки экономической безопасности, сочетающая балльный и матричный методы и обеспечивающая сопоставимую многофакторную оценку социально-экономического развития на национальном и региональном уровнях.
- Сформирована аналитическая методология оценки внешней эффективности экономики, основанная на системном применении показателей платёжного баланса.

Предложенная методология позволяет оценивать влияние внешнеэкономических отношений на экономический рост, внешнюю устойчивость и формирование внешней уязвимости, а также выявлять основные риски внешнего сектора экономики.

- Сформулированы теоретико-методологические положения социально-экономического развития стран, не имеющих выхода к морю. Обосновано, что негативное влияние географических ограничений может быть существенно смягчено посредством институционального развития, проведения эффективной экономической политики, расширения логистических связей и углубления внешнеэкономической интеграции. Определены основные направления применения данных положений в условиях Республики Армения.
- Разработан и применён теоретико-методологический подход к комплексной оценке структуры и экономической сложности экономики Республики Армения. На его основе выявлены структурные диспропорции экономики, оценён уровень экономической сложности и обоснованы приоритеты развития высокотехнологичных, наукоёмких отраслей и видов деятельности, создающих высокую добавленную стоимость, как основы повышения долгосрочной конкурентоспособности национальной экономики.
- Проведена комплексная оценка макроэкономического развития и воспроизводственного потенциала Республики Армения. Проанализированы структурные изменения валового внутреннего продукта, валовой добавленной стоимости и основных макроэкономических показателей, выявлены отраслевые диспропорции экономики и обоснованы основные направления повышения качества экономического роста и структурной трансформации.
- Разработан подход к структурной оценке формирования и распределения доходов. На его основе выявлены основные причины и проявления социально-экономического неравенства и обосновано стратегическое значение расширения среднего класса как ключевого фактора обеспечения экономической стабильности, внутреннего спроса и инклюзивного экономического роста.
- На основе комплексной оценки логистических систем стран постсоветского пространства и возможностей внешнеторговой интеграции стран Южного Кавказа и региона выявлены основные логистические и структурные ограничения, влияющие на эффективность внешней торговли. Оценены сравнительные преимущества стран, особенности внешнеторговой специализации и потенциал региональной интеграции. На этой основе обоснованы приоритеты повышения эффективности внешней торговли Республики Армения, направленные на структурную диверсификацию экспорта, развитие производств с высокой добавленной стоимостью, совершенствование логистической инфраструктуры, эффективное использование транзитного потенциала и углубление регионального экономического сотрудничества.

Результаты исследования имеют теоретическое и прикладное значение. Они могут быть использованы при разработке стратегий социально-экономического развития Республики Армения, программ обеспечения экономической безопасности, мер структурной и социальной политики, а также мероприятий по развитию внешней торговли и логистической системы.

Предложенные подходы могут применяться органами государственного управления, научно-исследовательскими и образовательными организациями для оценки социально-экономических процессов и совершенствования соответствующих направлений государственной политики.

MERUZHAN ASHOT MARKOSYAN
PRIORITIES OF SOCIO-ECONOMIC DEVELOPMENT OF THE REPUBLIC OF ARMENIA

The abstract of the dissertation is submitted for the degree of Doctor of Economics in the field 08.00.02 – «Economy, the economics of its spheres and management»

The defense of the dissertation will take place at 14:00, on October 2, 2026 at the meeting of the Specialized Council 014 in Economics of the Higher Education and Science Committee of the Republic of Armenia, acting at the Armenian State University of Economics.
Address: 128 Nalbandyan street, Yerevan, 0025, Republic of Armenia.

In the contemporary global economy, geopolitical tensions, financial and economic crises, and energy and food-related risks exert a substantial influence on countries' socio-economic development. These challenges are particularly significant for small open economies such as the Republic of Armenia, where it is necessary to clarify socio-economic development priorities, allocate limited resources efficiently, and ensure sustainable and inclusive economic growth.

The structural characteristics of Armenia's economy, its external economic dependence, logistical constraints, structural imbalances in foreign trade, unequal income distribution, and deficiencies in the investment environment necessitate new approaches to the formulation and implementation of socio-economic policy. In this context, the scientific substantiation of development priorities, the comprehensive assessment of socio-economic processes, and the design of effective governance mechanisms constitute important scientific and practical tasks.

The purpose of the dissertation is to assess the structural efficiency of the economy, the level of economic security, the characteristics of income distribution, and trends in foreign trade based on a comprehensive examination of the socio-economic development challenges of the Republic of Armenia, as well as to propose priority areas for development and practical measures for their implementation.

The research produced several results that constitute the scientific novelty of the dissertation:

- An integrated theoretical and methodological framework for the comprehensive assessment of the socio-economic development of the Republic of Armenia has been developed. It combines macroeconomic, structural, economic security, social distribution, and external economic indicators within a unified assessment system. Based on this framework, a comprehensive economic security assessment model has been developed by combining scoring and matrix-based methods, thereby enabling comparable and multifactor assessment of socio-economic development at the national and regional levels.
- An analytical methodology for assessing the external efficiency of the economy has been developed based on the systematic application of balance-of-payments indicators. The methodology makes it possible to assess the impact of external economic relations on economic growth, external stability, and external vulnerability, as well as to identify the principal risks facing the external sector of the economy.
- Theoretical and methodological principles governing the socio-economic development of landlocked countries have been formulated. It has been demonstrated that the adverse effects of geographical constraints can be substantially mitigated through institutional development, effective economic policy, the expansion of logistical connections, and deeper external economic integration.

The principal directions for applying these provisions in the Republic of Armenia have also been identified.

- A theoretical and methodological approach to the comprehensive assessment of the structure and economic complexity of the Armenian economy has been developed and applied. This approach has been used to identify structural imbalances, assess the level of economic complexity, and substantiate the priority development of high-technology, knowledge-intensive industries and activities that generate high added value as a basis for strengthening the long-term competitiveness of the national economy.
- A comprehensive assessment of the macroeconomic development and reproductive potential of the Republic of Armenia has been conducted. Structural changes in gross domestic product, gross value added, and key macroeconomic indicators have been analyzed, sectoral imbalances have been identified, and the principal directions for improving the quality of economic growth and promoting structural transformation have been substantiated.
- An approach to the structural assessment of income formation and distribution has been developed. On this basis, the principal causes and manifestations of socio-economic inequality have been identified, and the strategic importance of expanding the middle class has been substantiated as a key factor in ensuring economic stability, domestic demand, and inclusive economic growth.
- Based on a comprehensive assessment of the logistics systems of post-Soviet countries and the foreign trade integration opportunities of the South Caucasus and neighboring countries, the principal logistical and structural constraints affecting foreign trade efficiency have been identified. The countries' comparative advantages, patterns of foreign trade specialization, and regional integration potential have been assessed. On this basis, the priorities for improving Armenia's foreign trade efficiency have been substantiated, including the structural diversification of exports, the development of high-value-added production, the improvement of logistics infrastructure, the effective use of transit potential, and the strengthening of regional economic cooperation.

The research results have both theoretical and practical significance. They may be used in developing socio-economic development strategies for the Republic of Armenia, economic security programs, structural and social policy measures, and initiatives aimed at developing foreign trade and the logistics system.

The proposed approaches may also be applied by public administration bodies, research institutions, and educational organizations to assess socio-economic processes and improve the relevant areas of public policy.

ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ժամանակակից գլոբալ տնտեսության պայմաններում աշխարհաքաղաքական լարվածությունները, ֆինանսատնտեսական ճգնաժամերը, էներգետիկ և պարենային ռիսկերն էական ազդեցություն են ունենում երկրների սոցիալ-տնտեսական զարգացման վրա: Այս մարտահրավերները հատկապես կարևոր են փոքր և բաց տնտեսությունների համար, ինչպիսին Հայաստանի Հանրապետությունն է, որտեղ անհրաժեշտություն է առաջանում հստակեցնելու սոցիալ-տնտեսական զարգացման առաջնահերթությունները, արդյունավետորեն բաշխելու սահմանափակ ռեսուրսները և ապահովելու կայուն ու ներառական տնտեսական աճ:

Հայաստանի տնտեսության կառուցվածքային առանձնահատկությունները, արտաքին տնտեսական կախվածությունը, լոգիստիկ սահմանափակումները, արտաքին առևտրի կառուցվածքային անհավասարակշռությունները, եկամուտների անհավասար բաշխումը և ներդրումային միջավայրի խնդիրները պայմանավորում են սոցիալ-տնտեսական քաղաքականության ձևավորման ու իրականացման նոր մոտեցումների անհրաժեշտությունը: Այս համատեքստում զարգացման առաջնահերթությունների գիտական հիմնավորումը, սոցիալ-տնտեսական գործընթացների համալիր գնահատումը և արդյունավետ կառավարման մեխանիզմների մշակումը կարևոր գիտական ու կիրառական խնդիրներ են:

Ատենախոսության նպատակն է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների համալիր ուսումնասիրության հիման վրա գնահատել տնտեսության կառուցվածքային արդյունավետությունը, տնտեսական անվտանգության մակարդակը, եկամուտների բաշխման առանձնահատկությունները և արտաքին առևտրի զարգացման միտումները, ինչպես նաև առաջարկել զարգացման առաջնահերթ ուղղություններ ու դրանց կատարելագործման գործնական ուղիներ:

Հետազոտության ընթացքում ստացվել են մի շարք գիտական արդյունքներ, որոնցից որպես գիտական նորույթ առանձնացվել են հետևյալները.

- Մշակվել է Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման համալիր գնահատման ինտեգրված տեսամեթոդաբանական հայեցակարգ, որի շրջանակում միասնական գնահատման համակարգում համադրվել են մակրոտնտեսական, կառուցվածքային, տնտեսական անվտանգության, սոցիալական բաշխման և արտաքին տնտեսական ցուցանիշները: Հայեցակարգի հիման վրա ձևավորվել է տնտեսական անվտանգության համալիր գնահատման մոդել՝ բալային և մատրիցային գնահատման մեթոդների համադրմամբ, որն ապահովում է ազգային ու

տարածաշրջանային մակարդակներում սոցիալ-տնտեսական զարգացման համադրելի և բազմագործոն գնահատում։

- Ձևավորվել է տնտեսության արտաքին արդյունավետության գնահատման վերլուծական մեթոդաբանություն՝ հիմնված վճարային հաշվեկշռի ցուցանիշների համակարգային կիրառման վրա։ Այն հնարավորություն է տալիս գնահատելու արտաքին տնտեսական հարաբերությունների ազդեցությունը տնտեսական աճի, արտաքին կայունության և արտաքին խոցելիության ձևավորման վրա, ինչպես նաև բացահայտելու տնտեսության արտաքին հատվածի հիմնական ռիսկերը։
- Ձևակերպվել են ցամաքով շրջապատված երկրների սոցիալ-տնտեսական զարգացման տեսամեթոդաբանական հիմնադրույթները։ Հիմնավորվել է, որ աշխարհագրական սահմանափակումների բացասական ազդեցությունը կարող է էապես մեղմվել ինստիտուցիոնալ զարգացման, արդյունավետ տնտեսական քաղաքականության, լոգիստիկ կապերի ընդլայնման և արտաքին տնտեսական ինտեգրման միջոցով։ Սահմանվել են նշված հիմնադրույթների կիրառման հիմնական ուղղությունները Հայաստանի Հանրապետության պայմաններում։
- Մշակվել և կիրառվել է Հայաստանի Հանրապետության տնտեսության կառուցվածքային և տնտեսական բարդության համալիր գնահատման տեսամեթոդաբանական մոտեցում։ Դրա հիման վրա բացահայտվել են տնտեսության կառուցվածքային անհամաչափությունները, գնահատվել է տնտեսական բարդության մակարդակը և հիմնավորվել բարձր տեխնոլոգիական, գիտատար ու բարձր ավելացված արժեք ստեղծող ճյուղերի և գործունեության տեսակների զարգացման առաջնահերթությունը՝ որպես ազգային տնտեսության երկարաժամկետ մրցունակության բարձրացման հիմք։
- Կատարվել է Հայաստանի Հանրապետության մակրոտնտեսական զարգացման և վերարտադրության ներուժի համալիր գնահատում։ Վերլուծվել են համախառն ներքին արդյունքի, համախառն ավելացված արժեքի և հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կառուցվածքային փոփոխությունները, բացահայտվել են տնտեսության ոլորտային անհամաչափությունները և հիմնավորվել տնտեսական աճի որակի բարձրացման ու կառուցվածքային վերափոխման հիմնական ուղղությունները։
- Մշակվել է եկամուտների ձևավորման և բաշխման կառուցվածքային գնահատման մոտեցում։ Դրա հիման վրա բացահայտվել են սոցիալ-տնտեսական անհավասարության հիմնական պատճառներն ու դրսևորումները և հիմնավորվել միջին խավի ընդլայնման ռազմավարական նշանակությունը՝ որպես տնտեսական կայունության, ներքին պահանջարկի և ներառական տնտեսական աճի ապահովման առանցքային գործոն։

- Հետխորհրդային երկրների լոգիստիկ համակարգերի և Հարավային Կովկասի ու տարածաշրջանի երկրների արտաքին առևտրային ինտեգրման հնարավորությունների համալիր գնահատման հիման վրա բացահայտվել են արտաքին առևտրի արդյունավետության վրա ազդող լոգիստիկ և կառուցվածքային հիմնական սահմանափակումները: Գնահատվել են երկրների համեմատական առավելությունները, արտաքին առևտրի մասնագիտացման առանձնահատկությունները և տարածաշրջանային ինտեգրման ներուժը: Դրանց հիման վրա հիմնավորվել են Հայաստանի Հանրապետության արտաքին առևտրի արդյունավետության բարձրացման առաջնահերթությունները՝ ուղղված արտահանման կառուցվածքային դիվերսիֆիկացմանը, բարձր ավելացված արժեք ունեցող արտադրության զարգացմանը, լոգիստիկ ենթակառուցվածքների կատարելագործմանը, տարանցիկ ներուժի արդյունավետ օգտագործմանը և տարածաշրջանային տնտեսական համագործակցության խորացմանը:

Հետազոտության արդյունքներն ունեն տեսական և կիրառական նշանակություն: Դրանք կարող են օգտագործվել Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարությունների, տնտեսական անվտանգության ծրագրերի, կառուցվածքային և սոցիալական քաղաքականության, արտաքին առևտրի ու լոգիստիկ համակարգի զարգացման միջոցառումների մշակման ընթացքում: Առաջարկված մոտեցումները կարող են կիրառվել նաև պետական կառավարման մարմինների, գիտահետազոտական և կրթական հաստատությունների կողմից՝ սոցիալ-տնտեսական գործընթացների գնահատման և համապատասխան քաղաքականության կատարելագործման նպատակով: